Azg
armenian daily
11 ՅՈՒԼԻՍ 1995. ԵՐԵՔՇԱԲԹԻ # 130 (884)

Տիղա՞ր գյուղը

Կուռ միասնական, միանշանակ

Հանրաքվեներում երևի ամենաօրինաչափն ու տիպար գյուղը, թերևս նաև միակը, Կրասնոսելսկի շրջանի Աղբերք գյուղն է, որն ունի 269 գրանցված քվեարկող: Հուլիս 5-ին Սահմանադրության հանրաքվեին, մեծամասնական եւ համամասնական ընտրություններին գյուղը մասնակցել է միահամուռ: 269 մարդ ներկայացել է քվեատուփ: Սահմանադրությանը «այո» է ասել 269 հոգի, «Հանրապետություն» համախմբմանը կողմ են քվեարկել 269 մարդ, ՀՀԾ նախագահ Տեր Հուսիկ Լազարյանին են ընտրել բոլոր 269 քվեարկողները: Այսպիսով, այստեղ եղյակ միաձայնությամբ անցան բոլոր 3 քվեարկությունները:

Հետաքրքրական է սակայն, որ նույն ձեւով են քվեարկել Տեր Հուսիկի անմիջական մրցակից Համլետ Դալլաքյանի նույն Աղբերք գյուղում աղրոդ հարազատ երկու քեռիները:

ՀԱՆՐԱՔՎԵ

Տեղերից ստացված տվյալները չեն համապատասխանում ընդհանուրի

Բացի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից Կենտրոնական ընտրական հանձնաժողովից, քվեարկությունների արդյունքներն ամփոփվում են նաեւ քաղաքական տարբեր կազմակերպությունների մոտ: Յուրաքանչյուր կուսակցություն, օգտվելով ընտրատարածքներում ու տեղամասերում ունեցած իր ներկայացուցիչներից եւ կառույցներից, սկզբում հեռախոսով եւ այնուհետեւ գրավոր, բավական մեծ թվով տվյալներ է կուտակել, որոնք, գոնե Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության պարագայում, ներկայիս ճգտվում եւ դասավորվում են համապատասխան ուսումնասիրության համար:

Իր ունեցած տվյալներն առաջինը մեզ տրամադրեց ԱԺՄ մամուլի եւ տեղեկատվության գրասենյակը: Այսօր դրանցից առանձնացնում ենք միայն 7 ընտրատարածք՝ բացառապես հանրաքվեի արդյունքների վերաբերյալ: Ու թեեւ ճիշտ է, որ ԿԶՀ-ն դեռեւս հանրաքվեից 5 օր հետո էլ չի ներկայացրել իր ունեցած տեղամասային պատասխանական արդյունքները եւ, հետեւաբար, մեծամասամբ կարելի չէ դրանք համեմատել ստորեւ հրապարակվող տվյալների հետ, սակայն 7 ընտրատարածքների արդյունքները սուգապես ճիշտ լինելու պարագայում, բոլորովին տարբեր պատկեր կարող են տալ հանրաքվեի ընդհանուր արդյունքների մասին:

1. Տավուշ, թիվ 128 ընտրատարածք: Սահմանադրությանը «այո» են քվեարկել 4853 մարդ, մինչ «ոչ»-ն ասել 6904 հոգի:

2. Իջեւան, թիվ 129 եւ 130 ընտրատարածքներ:

Թիվ 129 ընտրատարածքում «այո»-ն են քվեարկել 5013-ը, «ոչ»՝ 5238-ը: 130-րդ ընտրատարածքում «այո»-ի կողմնակիցներն եղել են 4203 հոգի, «ոչ»-ի կողմնակիցները՝ 6805:

3. Միսիան, թիվ 144 ընտրատարածք: 4810 հոգի կողմ են քվեարկել Սահմանադրությանը, 6734 հոգի՝ դեմ:

4. Ալավերդի, թիվ 135 ընտրատարածք: Այստեղ կողմերի թիվը կազմել է 2850, իսկ դեմերինը՝ 4084 հոգի:

5. Անի, թիվ 113 ընտրատարածք: Անիում 3042 հոգի պաշտպանել են Սահմանադրության նախագիծը եւ 5941 հոգի դեմ են եղել դրան:

6. Չարենցավան, թիվ 71 ընտրատարածք: Այստեղ նույնպես դեմ քվեարկողների թիվը գերազանցել է կողմ քվեարկողներին, համապատասխանաբար կազմելով 4331 եւ 6039:

Այստեղ հետաքրքրական պիտի լիներ համեմատության համար բերել պաշտոնական (սակայն դեռեւս ոչ վերջնական) միայն 2 տվյալ, որ շաբաթ, հուլիսի 8-ի դրությամբ, ըստ ԱԺՄ մամուլի գրասենյակի, եղել է ԿԶՀ-ում: Սիսիանի թիվ 144 ընտրատարածքում «այո»-ն են ասել 8171-ը, իսկ «ոչ»՝ 3467: Իսկ Անիում «այո»-ն եւ «ոչ»-ը համապատասխանաբար ներկայացվել են 7759 եւ 863:

Գեորգի Պետրոսյանը ձերբակալված

Ինչպես հայտնի է դարձել «Ազգին» հավաստի, բայց ոչ պաշտոնական աղբյուրներից, ուրբաթ օրը, հուլիսի 7-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձերբակալվել է ԼՂՀ ԳԽ նախկին նախագահ Գեորգի Պետրոսյանը: Նրա հետ մեկտեղ ձերբակալվել է նաեւ Վալերի Բալայանը: Խուզարկման է ենթարկվել ժաննա Գաղտչյանի բնակարանը: ԼՂՀ պաշտոնական մարմինները առայժմ որեւէ մեկնաբանություն չեն տվել, սակայն ըստ մեզ հասած տվյալների, ձերբակալման պատրվակը տնտեսական է, եւ կապված է «Արցախ» հիմնադրամի հետ: Այլ մեկնաբանների գնահատականներով, դա ՀՅԴ-ի դեմ սկսված գործողությունների մասն է կազմում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համամասնականի 5 տոկոսը հաղթահարել են հինգ կուսակցություններ

ՀՌԱԿ-ը 4-րդ դիրքից «նահանջել է» 6-րդը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հուլիսի 10-ին ոչեմ է հրապարակեր ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների համամասնական ընտրական համակարգի տվյալները: Մինչեւ մամուլ ասուլիս հրավիրելը ժամը 18-ին, ԿԸՀ-ի նիստում վերջնականորեն ոչեմ է ամփոփվեին ու հաստատվեին կուսակցությունների ստացած քվեները: Ներկայացված փաստաթղթում 5 տոկոսի սահմանագիծը 13 կուսակցություններից հաղթահարել էին հինգը: Ըստ հաշվարկների, «Հանրապետություն» միավորումը բաժին էր ընկել ձայների մեծամասնությունը՝ 43,90, երկրորդ տեղում «Շամիրամն» է՝ 17,36, երրորդ տեղում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 12,44, չորրորդում Ազգային ժողովրդավարական մլությունը՝ 7,73, հինգերորդում Ազգային ինքնորոշում միավորումը՝ 5,73 տոկոս: Այսինքն «Հանրապետություն» միավորումը համամասնական ընտրական համակարգով Ազգային ժողովում ստանում է 20 մանդատ, «Շամիրամը»՝ 8, ՀԿԿ-ն՝ 6, ԱԺՄ-ն՝ 3, ԱԻՄ-ը՝ 3 մանդատ:

Ներկայացված թվերը ԿԸՀ-ի անդամների կողմից միանշանակ չընդունվեցին: Ուստի նիստը գրեթե չկայացավ: Ընդհանրապես հետաձգվեց նաեւ այդ նոպատակով հրավիրված մամլո ասուլիսը: ԿԸՀ-ի նախագահի տեղակալ Գ. Ջահանգիրյանը եւս հայտնեց, որ այսօրվա թվերը հիմնավոր չեն, լրացուցիչ հաշվարկման կարիք ունեն, վաղը կգրաքվեն դրանով: Այսօր երեկոյան ժամը 19-ին ԿԸՀ-ն կրկին նիստ կգումարի, այս անգամ հավանաբար համամասնականով ներկայացված կուսակցությունների քվեները վերջնականապես կհաստատվեն: ԿԸՀ-ի երեկվա տեղեկատվությամբ համամասնական հրաքվեարկությանը մասնակցել են 1195283 ընտրողներ, քվեաթերթիկների ընդհանուր թիվը կազմել է 1183573, որից անվավեր է ճանաչվել 441743-ը: Թեղեւեւ եւ տարբեր վերջնական թվերը չեն, ինչպես հավաստիացրին ԿԸՀ-ից, այնուամենայնիվ, այն տեսակետն էր իշխում, որ ներկայացված թվերը այսօր մեծ փոփոխություն չեն կրելու, եւ դժվարանում է 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարող եւս մեկ կուսակցություն:

Այս կապակցությամբ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության գրասենյակից հաղորդեցին, որ առայժմ կարելի է միայն զարմանք արտահայտել, որ մինչեւ հուլիսի 7-ի դրությամբ, ոչ վերջնական, բայց ընտրատարածքների գերակշիռ մասից ստացված տվյալներով, 4-րդ տեղը 6,3 տոկոսով գրավելուց հետո, ՀՌԱԿ-ը հաջորդ օրն արդեն «մղվել» էր 6-րդ դիրք՝ 2,6 տոկոսով: Ու մինչ ոչեական ռադիոն 2 անգամ (անցյալ հինգշաբթի եւ ուրբաթ) հաղորդել էր առաջին անցողիկ հնգյակում ՀՌԱԿ-ի հանգրվանած լինելու մասին, ինչը համադասասխանում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ՀՌԱԿ-ի ներկայացուցչի (եւ ոչ միայն նրա) ունեցած տվյալներին, ընդամենը մեկ օրում այդ տվյալները կասկածելի փոփոխության ենթարկվեցին եւ հոծ թվով անվավեր քվեաթերթիկների հանակի կրճատմամբ ստեղծվեց ներկա դրությունը, միաժամանակ ուռճացնելով, բացի Կոմկուսից, մնացյալների ցուցանիշները: «ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը, ասացին կենտրոնական գրասենյակից, վերջնական արդյունքների հրապարակումից հետո իրեն է վերապահում դրանց անդրադառնալու իրավունքը»:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Սպասվում է Մինսկի խորհրդաժողովի համանախագահների այցը

ԲԱԿՈՒ, 10 ՀՈՒԼԻՍ, ԹՈՒՐՔՄՆԱՐԲ: Այս շաբաթ ԵԱՀԿ Մինսկի խմբի դրամվիրակությունը Մինսկի խորհրդաժողովի համանախագահներ Վալերի Լոգինովի եւ Հեյկի Տալիվիտիի գլխավորությամբ կայցելի հակամարտության շրջան: Այդ մասին Թուրանի թղթակցին հայտնեց ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի ռուս համանախագահի ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը: Նրա խոսքերով, այցը կտեւի հուլիսի 12-ին կամ 13-ին: Համանախագահները ուզում են ակտիվացնել ջանքերը եւ հնարավոր ամեն ինչ անել դիրքորոշումներն ավելի լավ հասկանալու եւ դրանց մերձեցման հնարավորություններ փնտրելու համար, ասաց Կազիմիրովը: Նրա կարծիքով, սկսվում է այն դրսի, երբ կողմերը դեմ է սրան գնահատեն իրենց ներուժը, շրջանում զինադադարի դրամանման հնարավորությունները եւ ընդունեն իրատեսական որոշումներ: «Մինչեւ օրս փոխզիջման որոնումների փոխարեն ոմանք նախընտրում են գրաղել հակամարտության մեջ շտապույր հաղթանակի հարցությամբ: Սակայն ամենքը դեմ է գնահատեն, որ այս հակամարտության մեջ չեն լինի ոչ հաղթողներ, ոչ էլ պարտվողներ: Հարցի վերջնական լուծումը կգտնվի հենց այս ձեւակերպմամբ», ընդգծեց Կազիմիրովը:

Հարաբերական անդորրը ժամանակ առ ժամանակ խախտվում է

Հուլիսի 9-ին եւ լույս 10-ի գիշերն ու առավոտյան հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով սահմանային միջադեպեր չեն գրանցվել: ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի եւ լրատվության վարչության զանգվածային լրատվության միջոցների հետ կապի բաժնից հայտնեցին, որ հուլիսի 9-ի երեկոյան ադրբեջանական զինված ստորաբաժանումներ վերահսկի ռեմնգությունն են կատարել հայ-ադրբեջանական սահմանի հյուսիս արեւելյան հատվածի ողջությամբ: Ժամը 22.45-23.05-ը հակառակորդը ականանետներից ու խոշոր տրամաչափի զենադգիրներից հրետակոծել եւ գնդակոծել է Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղի պաշտպանական դիրքերը: Տուժածներ ու ավերածություններ չկան: Պատասխան կրակից հետո հակառակորդը լռել է: *ԼՏ*

ՀԱՄԱՌՈՏ

ՆԱՏՕ-ն սպառնում է կրկին օդից հարվածել սերբերին

ԲԵԼԳՐԱԴ, 10 ՀՈՒԼԻՍ, WSJ: Սերբական հեռեւակը հրաժարվեցին պաշտպանությամբ այսօր առաջ շարժվեց գերազանցապես իսլամներով բնակեցված Սրեբրենիցա ավանի վրա, անտեսելով ՄԱԿ-ի նախանշած «անվտանգության գոտին»: Սերբերը իրենց շարժման ընթացքում գրավեցին ՄԱԿ-ի խաղաղապահների 15 ուղեկալներ, ձերբակալելով 30 խաղաղապահների: ՄԱԿ-ի ղեկավարությունը կեսօրին սպառնաց սերբերի դեմ կրկին գործի դնել ՆԱՏՕ-ի օդուժը: Մյուս կողմից, Բոսնիայի իսլամները շաբաթ օրը սպանեցին ՄԱԿ-ի հոլանդացի խաղաղապահներից մեկին, որն իր զորամասի հետ նահանջում էր կրակի գոտուց:

Բարուկովը ՌԴ անվտանգության ծառայության ղեմ

Այս մասին ՆԵԳԱ գործակալության թղթակցին հայտնի դարձավ ԱԳԾ մոսկովյան վարչությունում: Աղբյուրի ասելով, Բարուկովին այդ պաշտոնին նշանակելու մասին հրամանագիրը արդեն պատրաստ է: Սակայն պաշտոնաթող ՌԴ ԱԳԾ մամլո ծառայությունում հրաժարվեցին հաստատել այդ տեղեկությունը, վկայակոչելով, որ ձեռքի տակ չունեն այդ տեղեկությունը հաստատող ոչ մի փաստաթուղթ: *ԼՏ*

ՇՐՋԱՆ

Ընդլայնվում են Ռուսաստանի եւ Ադրբեջանի տնտեսական կապերը

ՄՈՍԿՎԱ, 8 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔՈՒԹ: Այսօր Մոսկվայում ստորագրված Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ տնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը թույլ կտա ընդլայնել երկու երկրների առեւրատնտեսական կապերը, գտնում է Ադրբեջանի փոխվարչապետ Աբաս Աբասովը: Նրա ասելով, այս փաստաթուղթը լուծում է այսօր գոյություն ունեցող խնդիրներից մեկը: Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ տրանսսահմանային հաղորդակցությունների բացումը, որոնք փակվել են վերջին տարվա ընթացքում: Համաձայնագիրը նախատեսում է նաեւ երկու հեռուստաընկերությունների միջեւ եղած պարտքերի փոխվճարում: Աբասովը նշեց նաեւ, որ այժմ նախապատրաստվում է 12 փաստաթուղթ երկու երկրների գործառնական համագործակցության վերաբերյալ:

Վրաստանը դժգոհում է Ռուսաստանից եւ Թուրքիայից

Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն իր դժգոհությունն է հայտնել Ռուսաստանի ղեկավարությանը, վերջինիս կողմից Աբխազիայում տեղի ունեցած ջրհեղեղի հետեւանքները վերացնելու համար արհամարհական կողմին նյութական եւ ֆինանսական օգնություն ցույց տալու համար, որակելով այն որպես Վրաստանի Հանրապետության ինքնիշխանության խախտում:

Ինչպես նշել է Էդուարդ Շեւարդնաձեն, Ռուսաստանի Դաշնության կողմից ձեռնարկվող այդպիսի միջոցառումները, որոնք նախատես չեն համաձայնեցվել վրացական իշխանությունների հետ, կարող են ապիր հանդիսանալ վրաց-ռուսական հարաբերությունների բարդացումների:

Միաժամանակ, Վրաստանում Թուրքիայի դեսպան Թ. Օքյարոզի հետ հանդիպմանը Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիքվաիձեն դժգոհություն հայտնեց այն կապակցությամբ, որ Թուրքիան Աբխազիային դարձյալ կանոնավոր կերպով մրցերք է առաքում, մի բան, որ խախտում է միջազգային հանրության որոշումը մրցերային շրջափակում հայտարարելու մասին, հաղորդում է Իրեռիա գործակալությունը: Ի պատասխան դրան, Թուրքիայի դեսպանը ասաց, որ օգնությունը Աբխազիային ցույց է տալիս ոչ թե Թուրքիայի ղեկավարությունը, այլ տարբեր հասարակական կազմակերպություններ, եւ պետությունը չի վերցնում իր վրա ոչ մի պատասխանատվություն: *ԼՏ*

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱԼԳՐԱԴԱՐԹ

Հերթում հերթումի

Մամուլը մեզ մոտ կիսով միայն ազատ է. այս տխուր փաստը հնարավոր չէ անտեսել, եւ իհարկէ դրանում կարելի է մեղադրել շատերին: Ես ցանկություն չունեմ կրկին ենթադրել իշխանությանը, որի դերը նման բացասական իրականության ձեւավորման գործում իրոք անգերազանցելի է: Գոյություն ունի մեկ այլ խնդիր, որը հավանաբար պակաս կարեւոր չէ համապատասխան լրագրական դողրոցի բացակայությունը եւ ինչն ավելի բախտորոշ է՝ որոշ անձանց չկամությունը ծանոթանալու լրագրողական էթիկայի տարական կանոններին:

«Ազգը», համենայնդեպս, փորձել է փաստակված լրատվությամբ լուսաբանել նախընտրական արշավը եւ բուն ընտրությունների եւ հանրաքվեի ընթացքը. կարծում եմ, դա բերին հաջողվել է: Այլ տեսանկյան ներքո, գուցե առաջադրյուն մի աշխատանք՝ ամենբան կանխորոշված էր: Ինչեւէ, բնական է, որ անաչառ տեղեկության թիրախ դարձած «համեստ օրինաչափությունը» չէր կարող հանդուրժել կատարված իրադարձությունների «խեղաթյուրումը», առավել եւս որ նյութերում հոդվածներ էր դրված նրա «ազնիվ» անունը: Այնուամենայնիվ ակն կալվող հերքումների մակընթացության պիտի, կարծում եմ, ավելի կոչված էր թարթել մասնավորապես «Հայք» կամ «Առավոտ» թերթերի խմբագրակազմի մասնագիտական գիտելիքների պաշարը:

Համաչափասխան բոլոր լրագրական օրենքների համաձայն, հերքվող նյութը անհրաժեշտ է տպագրել նույն թերթում, որտեղ լույս է տեսել հերքված հոդվածը: Ընդ որում, այն պետք է տեղադրված լինի նույն սյունակում եւ նույնիսկ մեկ տողով չգերազանցի «կեղծ տեղեկատվության» ծավալը: Հիշեցման կարգով նկատենք, որ Գերմանիայում հայտնի «Die Aktuelle» թերթը, իր հեղինակությունը պահպանելու նպատակով, ստիպված եղավ առաջին էջի առաջին սյունակում տպագրել հերքում՝ խորագրված Սոֆիկ Լորենի մի աշխատանքի՝ առանց նրան հարցնելու: Միայն այդպիսի հրապարակումը կարող է հանդիսանալ մինչեւ հուլիսի 21-ը լիազորություններ ստանալու ԳԻԱՔՄԻ-ն որոշումը կայացած ընտրությունների արդյունքներն անօրինական հայտարարելու եւ նոր ընտրություններ նշանակելու մասին:

Դա նշի համարում իշխանությունների եւ ժողովրդի միջեւ առաջացած ու հետզհետե խորացող անդունդի վերացման ուղիներից մեկը»:

ԵՐԵՎԱՆ

ԳԻԱՔՄԻ-ն պահանջում է չեղյալ համարել ընտրությունները

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍ: Հրապարակի վրա է ԳԻԱՔՄԻ-ի հայտարարությունը, որ մասնավորապես ասվում է.

«Հայաստանի Գիտա-արդյունաբերական եւ բարեգործական միությունը, համոզված լինելով, որ թե Ազգային ժողովի ընտրությունները, թե Սահմանադրության հանրաքվեն անցկացվել են անիրավական, անարդար եւ ոչ ազատ պայմաններում, այնուհանդերձ անհարաժեշտ համարեց դիմել ժողովրդին ընտրություններին ակտիվորեն մասնակցելու կոչով, կարգավորելով բոլոր հնարավորությունների գործադրումը իշխանություններին թույլ չտալու ձեռք գցել նաեւ մի լծակ Հայաստանում բանտիրական ավարառուն կարգեր հաստատելու ճանապարհին:

Դեկտեմբեր եր մի բանի օր է անցել ընտրություններից, մեր խորին եռանդագիտությունն ենք հայտնում ընտրողներին հիրավի անհնարաղեղ բարեական ակտիվության համար, որով իրենց վճռական «ՈՉ»-ն ասացին իշխող վարչախմբին ու նրա առաջարկած Սահմանադրությանը:

Համաժողովրդական հենց այդ ակտիվությունն ու անխուսափելի ողբերգության հեռանկարն էին, որ ստիպեցին իշխանություններին նախընտրական փուլում թույլ տված զանգվածային խրախուսումներին ու կեղծիքներին հուլիսի 5-ին ավելացնել նաեւ ուժային կառույցներ. բեռական տարեր եւ կասկածելի այլեալ խմբերի կողմից բացահայտ ճնշումներ: Միջազգային շուրջ 200 դիտորդների ներկայությունը ոչնչով չփոխեց իրերի դրությունը:

Ընդդիմով, իշխանությունները կատարյալս բացահայտեցին իրենց հակահրավական, հակաժողովրդավարական էությունը հանում իշխանության դահլիճման, օրինականության ու բարոյականության բոլոր սահմաններ խախտելու դատապարտելի ընթացքը:

Ընտրությունների եւ հանրաքվեի արդյունքները հանրությանը ներկայացնելուց առաջ այս օրերին վարչախմբի կողմից դրանք լիովին տրաքարումների ենթարկելը կասարյալ հավաստում է, որ այդ արդյունքները ամենեին չեն արտահայտի ժողովրդական կամքի իրական դատկերը:

Ստեղծված իրավիճակում ԳԻԱՔՄԻ-ին գտնում է.

ա) Հուլիսի 5-ի ընտրությունների եւ հանրաքվեի արդյունքները ծայրեծայր կեղծված են վարչախմբի կողմից, ուստի հիմք չեն կարող հանդիսանալ իշխանության ոլեւ օրենքի կազմավորման եւ գործունեության համար:

բ) Միության ոլեւ անդամ չի մասնակցում նման եղանակով ստեղծված Ազգային ժողովի եւ այլ ոլեւ դեսական կառույցի աշխատանքներին:

գ) Առաջինի եւ հակասահմանադրական արձանագրությունների տակ իր ներկայացուցչի ստորագրությունը բացառելու նպատակով ԳԻԱՔՄԻ-ն եռ է կանչում ԿԸՀ-ում ընդգրկված իր ներկայացուցչին:

դ) Զանգվածային խախտումներից առաջացած հիշական «գերհաջողության» արբագրումների միջոցով բարեական տարբեր կազմակերպություններին «շնորհվող» հատկենքն տրոնները դիտի եռ տրվեն իշխանություններին ընդդիմադիր կուսակցությունների եւ կազմակերպությունների բարեական ու բարոյական վարկը դահելու նպատակով:

ԵՐԵՎԱՆ

Պատասխան Ա. Ա-ին

Նույն ինքը՝ Ադիկարո Ափունգոն, որին այդ անվանմամբ դիմուկ բնորոշել է իր գործընկերը: Իսկ մեզ մնում է միայն ավելացնել, որ «Հայաստանի Հանրապետիուն» օրաթերթի հունիսի 3-ի համարում «Տեղ ա շարժ»-ի հեղինակը՝ չկայացած լրագրող, այս անգամ էլ չի ընկալել հեղինակիս ու Ալվարդ Պետրոսյանի «զուգերգի»-ի մասը, որի մեջ շաս խոր ցավ ու ափսոսանք կար եւ ոչ թե կուսակցական սահմանափակություն, որից այն կողմ հոդվածագրի երեւակայությունը չի գործում: «Երկրի տիրոջ հոգեբանությունն ունեցող» Հրանտ Մաթեւոսյանը հազիվ թե տյվեր նման չկապակցված ու անտրամաբանական դատասխանից, որը Ա. Ա-ն թերեւս «արձվի» ներշնչանքով է երկնել: «Դատասխանից բխող հարցերս» սիրված արձակագրին կորցնելու ափսոսանքից է: Դժվար է համակերդվել, երբ նրա դատերը դատապարտում են ոչ թե ժողովուրդը, այլ՝ իրական տարրերը: Սա արդեն իսկ գնահատման չափանիշ է: Շատ կցանկանայի, որ Հ. Մաթեւոսյանի զավակներին ժողովուրդն ընդուներ այնպես, ինչպես Շիրազի ու Սեւակի զավակներին՝ սիրով եւ հարգանքով:

Հեղինակը դատասխանը թերեւս Ալվարդ Պետրոսյանից եր ակնկալում «Նման սդասարկուներին դատասխանելու սովորություն չունեմ, դասդիտակությունս թույլ չի տալիս»-սա է նրա դատասխանը: Իսկ իմ ուզածը լու միակ դատճառն այն է, որ տվյալ թերթի ընթերցող չեմ եւ հոդվածի մասին իմացել եմ ուշացումով:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ,

ՀԱՅԱՍՏԱՆ

Իրանի էներգետիկները Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐՔ: Երեւան երկօրյա ոչ դատասխանական այց կատարեցին Իրանյան «Սանիր» ընկերության մասնագետները, որոնք զբաղվում են էլեկտրատարածման հարցերով եւ արտահանմամբ: Այցը չուներ կոնկրետ նպատակ եւ զուտ ճանաչողական բնույթի էր: Ըստ Սնարի գործակալության տրամադրության տակ եղած տեղեկությունների, իրանյան ընկերության ներկայացուցիչները Երեւանում հանդիպել են էներգետիկայի եւ վառելիքի նախարարի տեղակալ Կարեն Գալստյանի եւ նախարարության ծեռնարկությունների ղեկավարների հետ:

Տեղատարափ անձրեւ եւ կարկուտ Գորիսում

Գորիսի շրջանում տեւական աննախադեպ երաշտին հաջորդեցին տեղատարափ անձրեւներն ու կարկուտը, որոնք մեծ վնաս հասցրին շրջանի գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին: Խնձորենկում շարից դուրս է եկել ցանքատարածություններ, ոչդատու այգիներ: Գյուղը կրել է մոտ 110 միլիոն դրամի վնաս: Գյուղվարչության կողմից կազմվում են համադասասխան ակտեր հանրապետության կառավարությանը ներկայացնելու համար: Տարերից տուժել են նաեւ շրջանի Հալիձոր, Հարժիս, Շինուհայր եւ այլ գյուղեր: *Արմենպրեսս*

ՍԻՍԻԱՆ

Հանրաքվեի արդյունքները ԿԸՀ են ներկայացվել խեղաթյուրված

Սիսիանի թիվ 144 ընտրատարածային եւ տեղամասային հանձնաժողովների անդամները, դատգամավորության թեկնածուները, վստահված անձինք (թվով 25 հոգի) եւ բազմաթիվ խաղաղաշունչ բողոքներ են ներկայացրել ՀՀ Աժ դատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողով: Համաձայն այդ բողոքների, թիվ 144 ընտրատարածքում ընտրությունները ընթացել են բացահայտ ադօրինություններով: Որոշ տեղամասերում չի ապահովվել քվեարկության գաղտնիությունը, հայտնաբերվել են անձնատությունները ընտրողների ցուցակներում, արձանագրվել են քվեաթերթիկներ գդանալու եւ տեղամասից դուրս տանելու, ընտրողների ցուցակներում առկա ստորագրությունների եւ քվեաթերթիկների թվաքանակի անհամադատասխանությունների փաստեր, ստեղծվել են ընտրողների արհեստական հերթեր, քվեաթերթիկների անվավեր լինելը որոշելիս գործել են կամայականորեն եւ այլն: Ըստ ներկայացված փաստաթղթի, ընտրատարածային հանձնաժողովի կողմից կեղծվել են ՀՀ Սահմանադրության հանրաքվեի արդյունքները, ըստ որի թիվ 1506 ընտրական տեղամասում հանրաքվեին «Այո» ասել է 442 ձայն, իսկ «Ոչ»՝ 1042: Սակայն վերջնական արդյունքում ստացվել է ճիշտ հակառակը, այսինքն «Այո»՝ 1042 ձայն, «Ոչ»՝ 442: Ըստ դատգամավորության թեկնածուներ Վալերի Բալյանի եւ Թաքուշ Սյունիի, ողջ ընտրատարածքում նույն դատկերն է եղել. 4810 «Այո»-ն ԿԸՀ է ներկայացվել որպես «Ոչ», իսկ 6734 «Ոչ»-ը՝ որպես «Այո»: Բացի այդ, ոչնչացված չեն եղել Սահմանադրության հանրաքվեի քվեաթերթիկների կլիշեները: ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՀՅԴ ԳՈՐԾ

Երկու օրից լրանում է կասեցման ժամկետը, իսկ արդարադատության նախարարությունը առայժմ լռում է

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍ: Գերագույն դատարանի որոշմամբ ՀՅԴ Դաշնակցության գործունեության կասեցման ժամկետի լրանալուն մնում է ընդամենը երկու օր: Հայտնի է, որ Գերագույն դատարանը նման որոշում է կայացրել հիմնվելով ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած միջնորդության վրա: Սակայն առայժմ դարզ չէ, թե ինչ է տատանվում դատարանի որոշման ժամկետի լրանալուց հետո: Այդ հարցը դարզելու նդատակով մենք դիմեցինք արդարադատության փոխնախարար Տ. Պետրոսյանին, որը դատճառաբանելով ժամանակի սդորյունը, խորհուրդ տվեց դիմել հասարակական-քաղաքական կազմակերդությունների գրասենյակի վարչությունն, որի ղեկավար Ս. Մանասարյանը նախ կտրականապես հրաժարվեց, առաջարկելով դիմել փոխնախարարին, իսկ հետո իմանալով, որ վերջինս է մատնացույց արել իրեն, դատասխանատվություն հայտնեց լսել մեր հարցերը: Նրանից որեւէ դատասխան լսելը անհնար էր, որովհետեւ դրեն. Մանասարյանը տեղյակ չէր եւ կարող էր որեւէ դատասխան տալ միայն «փոխնախարարի հետ խորհրդակցելուց հետո»: Այնուամենայնիվ, նա խոստացավ վաղը այդ կաղակցությամբ դատասխանել մեզ:

Մանվել Սարգսյանը՝ դատասխանող

Ինչդես ոդջ հանրադետությունում, Վանաձորում նույնպես ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին, Սահմանադրության հանրաքվեին բնակչությունը ակտիվորեն է մասնակցել: Վանաձորում նույնպես ընտրությունները անցան ոչ առանց խախտումների. բոլոր տեղամասերում եղան քվեաթերթիկներ դուրս տանելու, քվեարկությունը երկարաձգելու դեղմեր: Կային այնդիսի տեղամասեր, որտեղ ցուցակներ էին կազմել (օրինակ թիվ 440 տեղամասը), հիշեցման թերթիկներ բաշխվել ըստ բնակության վայրի, սակայն քվեարկության էին բույլատրում ըստ գրանցման արհեստականորեն խոչընդոտելով ընտրական գործընթացը: Բոլոր խախտումների վերաբերյալ զեկուցագրեր են ներկայացվել ԿԸՀ-ին: Ըստ նախնական տվյալների, թիվ 60 ընտրատարածքում ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ հավաքեց կանույի ԱՄ-ի տնօրեն Վահան Բաղդասարյանը, թիվ 61-ում երկրորդ վայր անցան «Մեր Հայաստանին» բարեգործական միության նախագահ Ռաֆայել Գրիգորյանը եւ դատմաբան Վիկտոր Դալլաքյանը: Թիվ 62-ում անհրաժեշտ ձայներ հավաքեց ԳԻ վոխնախագահ Արտաշես Թումանյանը: Թիվ 63-ում «Հաց» ԱԱՄ-ի գլխավոր տնօրեն Բորիկ Մինասարյանը, թիվ 65-ում Խոյտորհրդի նախագահ Հովհաննես Մաղինյանը: Թիվ 64-ում երկրորդ վայր անցան Վանաձորի սոցիալական ծառայության դեպ Աշոտ Կարապետյանը եւ ՀՀ ԳԻ դատգամավոր Արամ Մանուկյանը: Ըստ դատգամավորական տվյալների, Վանաձորի մեծ մասը «Այո» է ասել Սահմանադրությանը: Համամասնական ընտրական համակարգով ընտրության առավելագույն ձայներ է հավաքել Կոմկուսը. երկրորդը «Հանրապետություն» միավորումը, երրորդը «Շամիրամը»:

Ըստ երեւույթին սոցիալական դժվարին կացությունն առավելագույնն է արտահայտվել վանաձորցիների մոտ: Դրա վկայությունն է սոցիալական ծառայության դեպի եւ բարեգործական միության նախագահի հայտարարությունը: Հետաքրքիր դեպք է գրանցվել թիվ 61 ընտրատարածքում: Դատգամավորության թեկնածու Ջեմմա Օհանյանը, հասակ չլինելով ընտրության կանոնները, չի կարողացել ընտրել իրեն իրեն: Այդ միակ քվեաթերթիկը արդյունքներն ամփոփելիս անվավեր է ճանաչվել եւ թեկնածուն տվյալ տեղամասում հավաքել է 0 ձայն: Ս. Ս.

ՈՒՍԿԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Դատարկություն է տարի
Գինը՝ դրամ եւ հատարկիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (7 88521) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՍՎԵԼ ԴԻԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊԱՒԵԼ ԴԱԼԼԱՔԵԱՆԻ
Apple Macintosh
հանձնարարական տարածքը
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

Կրթություն

Հանրակրթական դպրոցի նոր ուսումնական պլանը կործանարար է ազգի համար

Աղյուսակ 1
Հանրակրթական դպրոցի պետական պարտադիր բաղկացուցիչով շաբաթական ծանրաբեռնվածությունն ըստ դասարանների

Դասարան	հին ուս. պլան (ժամ)	նոր ուս. պլան (ժամ)	տարբերությունը հին եւ նոր ուս. պլանի միջեւ (ժամ)
1	27	20	7
2	29	20	9
3	30	20	10
4	31	20	11
5	34	24	10
6	34	24	10
7	39	28	11
8	39	28	11
9	38	16	22
10	39	17	22
Ընդամենը	340	217	123

Մեկնաբանություն. Աղյուսակից երեւում է, որ շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը գործող ուսումնական պլանով կազմում է 34 ժամ, նորով՝ 21,7 ժամ: Նոր ուսումնական պլանով աշակերտների շաբաթական ծանրաբեռնվածությունը պակասում է 12,3 ժամով: Ուսման ողջ ընթացքում բոլոր առարկաների գծով լրիվ ծանրաբեռնվածությունը հանրակրթական դպրոցում գործող ծրագրով կազմում է 11560 ժամ, նորով՝ 7378 ժամ: Դրանց տարբերությունը հավասար է 4182 ժամի: Դա նշանակում է, որ նոր ուսումնական պլանով հանրակրթական դպրոցն ավարտող շրջանավարտների գիտելիքների ծավալը լավագույն դեպքում կարող է հավասարժեք լինել գործող ուսումնական պլանով ուսման 6,5 տարուց ավելի քիչ ժամանակահատվածում ստացած գիտելիքների ծավալին: Եթե պետական պարտադիր բաղկացուցիչին ավելացնենք նաեւ դպրոցական բաղկացուցիչով եւ լրացուցիչ հատվածով նախատեսված ժամանակները, որոնք բերված չեն աղյուսակում, արդեն նույնիսկ այդ դեպքում նոր ուսումնական պլանի ծավալն ու բովանդակությունը մեկ տարվա հատվածով կգիջեն գործողին:

Աղյուսակ 2
Բնական գիտությունների ուսումնասիրությանը հատկացվող շաբաթական ծանրաբեռնվածությունն ըստ դասարանների

առարկա	ուս. պլան (ժամ)	դասարաններ I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	ընդամենը (ժամ)
Ֆիզիկա	հին						2	2	3	4	4	15
	նոր							2	2	1բ	1բ	4+2բ
	տարբ.						2		1	3	3	9
Մաթեմատիկա	հին	6	6	6	6	6	6	6	6/5	4/5	4	56
	նոր		5	5	5	5	5	5	5	2	2	39
	տարբ.	6	1	1	1	1	1	1	1	2	2	17
Քիմիա	հին							3	2	2	2	9
	նոր							2	2	1բ	1բ	4+2բ
	տարբ.							1		1	1	3
Կենսաբանություն	հին					2	2	2	2	1	2/3	10,5
	նոր					2	2	2	2	1	1	8+2
	տարբ.										1	0,5

Աղյուսակ 3
Ուսուցման ամբողջ ընթացքում բնական գիտությունների ուսումնասիրությանը հատկացվող ժամերի լրիվ ֆանկը

ուս. պլան	Հատկացվող ժամերի ֆանկը			
	Ֆիզիկա	Մաթեմատիկա	Քիմիա	Կենսաբանություն
հին	510	1904	306	357
նոր	136·68բ	1326	136·68բ	340
պակասած ժամանակ	306	578	102	17

Ծանոթություն. Աղյուսակում բ ինդեքսը ցույց է տալիս բնագիտություն առարկայից Ֆիզիկային եւ Քիմիային ենթադրաբար հատկացվելիք ժամանակը:

Աղյուսակ 4
Լեզուների ուսումնասիրությանը հատկացվող շաբաթական ծանրաբեռնվածությունն ըստ դասարանների

Լեզու	ուս. պլան (ժամ)	դասարաններ I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	ընդամենը (ժամ)
Հայոց լեզու	հին	10	9	9	4	3	3	2	2	1	2	45
	նոր		7	7	7	6	6	6	6	2	2	49
	տարբ.	10	2	2	3	3	3	4	4	1		4
Գրական ընթերցում	հին				4	3	3	3	3	5	4	25
	նոր									3	3	6
	տարբ.				4	3	3	3	3	2	1	19
Ռուսաց լեզու	հին	2	4	4	4	4	4	3	3	4	4	36
	նոր		3	3	3	3	3	3	3			21
	տարբ.	2	1	1	1	1	1			4	4	15
Օտար լեզու	հին		2	3	4	3	3	2	2	3	3	25
	նոր											
	տարբ.		2	3	4	3	3	2	2	3	3	25

Աղյուսակ 5
Ուսուցման ամբողջ ընթացքում լեզուների ուսումնասիրությանը հատկացվող ժամերի լրիվ ֆանկը

ուս. պլան	Հատկացվող ժամերի ֆանկը			
	Հայոց լեզու	Գրականություն	Ռուսաց լեզու	Օտար լեզու
հին	1530	850	1224	850
նոր	1666	144	714	
տարբ.	136	706	510	850

Ինչպես երեւում է աղյուսակ 5-ից, լեզուներ կրճատվել են գրականությանը եւ ռուսաց լեզվին հատկացվող ժամանակները, իսկ օտար լեզվին ժամեր չեն հատկացվում:

Հայաստանի Հանրապետության լուսավորության նախարարությունն առաջարկել է հանրակրթական դպրոցի հերթական ուսումնական պլանի նախագիծ: Այն հրապարակված է «Դպրոց» շաբաթաթերթում (թիվ 8, 17-23-05 1995 թ.): Ըստ տրված պարզաբանումների, առաջարկված ուսումնական պլանի նախագիծը բաղկացած է երեք ինքնուրույն կրտսեր դպրոցի, միջին դպրոցի եւ ավագ դպրոցի ուսումնական պլաններից: Այն ունի երեք բաղկացուցիչ՝

1. պարտադիր պետական, որի ծավալը եւ բովանդակությունը որոշվում է տվյալ կրթաստիճանային փուլում պետական կրթական ծրագրով պահանջվող սահմանաչափ պարտադիր գիտելիքների յուրացման նվազագույնով.
2. դպրոցական, որի ուսումնական պլանով դպրոցն ինքն է որոշում պարտադիր պետական բաղկացուցիչին ավելացվող ժամերի քանակը.
3. լրացուցիչ հատված, որի ծավալն ու բովանդակությունը կրտսեր, միջին եւ ավագ դպրոցում ձեւավորվում են աշակերտի կամ ծնողի ընտրությամբ, նախատեսական ծրագրերի ձեւով եւ միայն վճարովի հիմունքներով:

Պարզաբանումներից մատնանշվում է, որ դպրոցական բաղկացուցիչով կարող են նաեւ ժամեր չավելացնել, քանի որ այն թողնված է դպրոցի հայեցողությունը: Ինչ վերաբերում է լրացուցիչ հատվածին, արդյոք այն մատչելի է հասարակության միայն ունեւոր խավին: Ոչ վճարունակ երեխաները զրկվում են ուսումնական պլանի լրացուցիչ բաղկացուցիչի ուսումնասիրության, եւ հետեւաբար, բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Հանրակրթական դպրոցի շրջանավարտների հիմնական զանգվածի ստացած գիտելիքների նվազագույնը, որի յուրացումը բավարար է հասունության վկայական ստանալու համար, որոշվում է պարտադիր պետական բաղկացուցիչի ծավալով եւ բովանդակությամբ: Մեր կողմից կատարվել է նոր ուսումնական պլանի մանրակրկիտ վերլուծություն՝ դրա պետական բաղկացուցիչի լրիվ ծավալը, բնական գիտությունների եւ լեզուների ուսումնասիրությանը հատկացված ժամերի քանակը, համադրելով աշխարհում բարձր վարկ ունեցող եւ մեր հանրապետությունում մինչեւ այժմ գործող խորհրդային հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի, ծավալի ու բովանդակության եւ համապատասխան առարկաների ժամաքանակների հետ (Տես՝ աղյուսակներ թիվ 1-5):

ՀՀ լուսավորության նախարարության կողմից առաջարկված ուսումնական պլանի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կործանարար է ազգի համար, եւ, հետեւաբար, անընդունելի: Այդպիսի ուսումնական պլան կարելի է առաջարկել միջնադարի հանրակրթական դպրոցներին, երբ որոշես գիտություններ ձեւավորված չէին ֆիզիկան, մաթեմատիկան, քիմիան եւ աստղագիտությունը, երբ պարտադիր չէր օտար լեզուների իմացությունն ու ուսումնասիրությունը: Այս եզրակացությունն է հանգել Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը, որի ընդունած որոշումը Ընթերկվող հարցի վերաբերյալ բերվում է ստորեւ:

ՅՈՒ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ
Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր

Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 1995 թ. հունիսի 21-ին կայացած նիստի Որոշումը Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի ՀՀ լուսավորության նախարարության կողմից առաջարկված ուսումնական պլանի նոր նախագծի մասին

Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը, լսելով ՀՀ լուսավորության նախարարության կողմից առաջարկված հանրակրթական համակարգի «բարեփոխումների» մասին ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Յու. Ա. Չիլինգարյանի զեկուցումը, արձանագրում է.

1. Լուսավորության նախարարության կողմից մշակված հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի նախագիծը կարելի է որակել որպես հանրապետության հանրակրթական համակարգի զգալի նահանջ աշխարհում հավանության արժանացած եւ ընդունված նախկին խորհրդային կրթական համակարգին բնորոշ բարձր մակարդակից.

2. Առաջարկված ուսումնական պլանի պարտադիր պետական բաղկացուցիչի ծավալն ու բովանդակությունն անընդունելի են, քանի որ այդ ուսումնական պլանով հանրակրթական դպրոցը լավագույն դեպքում կարող է պատրաստել կիսագրագետ շրջանավարտներ.

3. Ուսումնական պլանն ունի այնպիսի կառուցվածք, որ բացառում է պարտադիր պետական բաղկացուցիչի ծավալով կրթություն ստացող աշակերտի մոտ լայն աշխարհայացքի ձեւավորումը: Նա չի կարող կազմավորել իր նախասիրությունների պորտը եւ կողմնորոշվել հետագա մասնագիտական կրթություն ստանալու ուղղության ընտրության մեջ.

4. Առաջարկված ուսումնական պլանի իրագործումը կբերի մեծ խզման կրթության դպրոցական եւ բուհական համակարգերի միջեւ.

5. Ուսումնական պլանի պարտադիր պետական բաղկացուցիչում մինչեւ այժմ գործող պլանի համեմատությամբ էապես կրճատված են բնական գիտությունների եւ լեզուների ուսումնասիրությանը հատկացված ժամանակները (կից ներկայացվում է համեմատական վերլուծությունը): Այսպես, եթե նախկին ուսումնական պլանով ֆիզիկա առարկայի ուսուցմանը հատկացված էր 510 ժամ եւ այն ուսումնասիրվում էր հինգ տարվա ընթացքում (6-10 դասարաններ), արդեն նոր ուսումնական պլանով պարտադիր պետական բաղկացուցիչում այդ առարկային հատկացված է 136 ժամ եւ երկու ուսումնական տարի (7-8 դասարաններ): 9-10-րդ դասարաններում ֆիզիկային լավագույն դեպքում կարող է հատկացվել եւս 68 ժամ բնագիտություն առարկայի ուսումնական պլանով:

Բնական գիտությունների արհամարհումը պարտադիր պետական բաղկացուցիչից հանրապետությանն ու ազգին կզրկի ինտելեկտուալ բազայից, հետեւաբար եւ գիտատեխնիկական ու տնտեսական զարգացման հեռանկարներից.

6. Առաջարկված «բարեփոխումների» իրագործման դեպքում մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստղագիտության, քիմիայի, կենսաբանության բնագավառում Հայաստանում ձեւավորված եւ իրենց գիտական արդյունավետությամբ համաշխարհային ճանաչում ստացած մի էլիտ խոշոր գիտական դպրոցներ դատապարտված են ոչնչացման.

7. Առաջարկված ուսումնական ծրագրի պարտադիր պետական բաղկացուցիչում բնական գիտությունների դասավանդման ժամանակների կրճատումը եւ դրա փոխարեն տնտեսագիտության հիմունքների դասավանդումը ժամանակներ հատկացնելն ուսումնական պլանը ուսումնասիրողին թույլ են տալիս հանգելու եզրակացության, որ նման «բարեփոխումները» ունեն միտում հանրակրթական դպրոցին մղելու այնպիսի շրջանավարտների պատրաստման, որոնք հետագայում ի վիճակի լինեն դառնալու ցածր հարկաներ: Կրթական համակարգի առաջարկվող տարբերակը անընդունելի է, քանի որ այն չի համապատասխանում հայ ժողովրդի ազգային նկարագրին, որը միշտ այլի է ընկել իր ինտելեկտուալ ներուժով.

8. Առաջարկված ուսումնական պլանում արտացոլված է հասարակական կյանքում այսօր նկատվող սոցիալական շերտավորումը: Պլանի իրագործման դեպքում հասարակության սոցիալապես անապահով շերտի համար գործնականում կվերանան բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները, քանի որ պետական բաղկացուցիչ չի ծավալով եւ բովանդակությամբ կրթություն ստացած շրջանավարտների գիտելիքները չեն բավարարի բուհերի կողմից առաջադրվող պահանջներին.

9. Լուսավորության նախարարությունն ակտիվ գործողություններ է ծավալել առաջարկված ուսումնական պլանին համապատասխան դասագրքեր ստեղծելու եւ տպագրելու հարցում: Աշակերտների եւ նրանց ծնողների ֆինանսական միջոցներով լուրջ փորձաքննություն չանցած դասագրքերի տպագրման այդպիսի հաղթեղությունը կարելի է դիտել որպես լուսավորության նախարարության կողմից հասարակությանը կատարված փաստի առջեւ կանգնեցնելու խաղարկություն.

10. Լուսավորության նախարարության կողմից հանրակրթական համակարգի ուսումնական պլանների նման փահաճ «բարեփոխումների» դրագիրը չէր առաջարկվի, եթե ՀՀ Գերագույն խորհուրդը ժամանակին ընդուներ օրենք կրթության մասին.

11. Ցարմանք ու ցավ է պատճառում ՀՀ գիտության եւ կրթության նախարարության անտարբեր վերաբերմունքը իր համակարգին կնդրեր մասակարարող հանրակրթական դպրոցի ճակատագրի հանդեպ.

12. Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը չի կարող անտարբեր լինել հանրակրթական դպրոցի ուսումնական պլանների, մասնավորապես եւ ֆիզիկա առարկայի ծրագրերի փահաճ «բարեփոխումների» հանդեպ՝ ելնելով այն բանից, որ կրթական համակարգը բաս նուրբ է, չի սիրում կտրուկ փոփոխություններ եւ այսօրվա թույլ տրված նույնիսկ փոքր սխալը հետագայում կարող է հանգեցնել մեծ վնասների: Ֆակուլտետում մանրամասն ուսումնասիրվել է դեռեւս 1994 թ. նախկին Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում մշակվող «Ֆիզիկայի ժամանակավոր պետական կրթական ստանդարտներ» նախագիծը եւ արժանացել հավանության: Հասարակության կողմից կրթական համակարգի առջեւ դրվող խնդիրների լուծումը կարելի է իրագործել վերոհիշյալ ստանդարտների որոշ կատարելագործումով:

ելնելով վերը շարադրվածից եվ հաշվի առնելով ինքնակվող հարցի վերաբերյալ կատարված առաջարկությունները ու դիտողությունները, ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հարց բարձրացնել ՀՀ կառավարության առջեւ՝
ա) անհապաղ դադարեցնել նոր ուսումնական պլանին համապատասխան ուսումնական գրականության տպագրության գործընթացը, որպեսզի դպրոցականները եւ ընդհանրապես հասարակությունը նոր ուսումնական տարվա սկզբին չկանգնի կատարված փաստի առջեւ.
2. Պահանջել հանրապետության նախագահից լուսավորության նախարարի պաշտոնից անհապաղ հեռացնել Ա. Բլեյանին.
3. Պահանջել ՀՀ Գերագույն խորհրդից՝
ա) ընդունել օրենք կրթության մասին, դրանով ամրագրելով հանրակրթական ուսումնական պլանի պարտադիր պետական բաղկացուցիչի ծավալը եւ բովանդակությունը, որպեսզի այն հետագայում պաշտպանված լինի լուսավորության համակարգի ղեկավարների կամայականություններից եւ փահաճույքից:
բ) Ուսումնական պլանի պարտադիր պետական բաղկացուցիչի ծավալը եւ բովանդակությունը կազմավորելու համար ստեղծել հանձնաժողովներ, դրանց կազմում լայնորեն ընդգրկելով միջնակարգ դպրոցների փորձառու ուսուցիչներին եւ մեթոդիստներին, բուհական համակարգի ճանաչված մասնագետներին եւ մանկավարժներին, Գիտությունների ազգային ակադեմիայի ակնառու գիտնական ներկայացուցիչներին:
4. Ունենալով հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի «բարեփոխումների» մի շարք ինքնադատություններ նկատմամբ հանրապետության, ինչպես նաեւ «բարեփոխումների» ծրագրի դեկավարների անտարբեր վերաբերմունքի դառը փորձը, հայտարարում ենք, որ այս որոշման նկատմամբ եւս անտարբեր վերաբերմունքի դեպքում մենք կդիմենք վճռական գործողությունների:

ՅՈՒ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ,
Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ
Ռ. Ե. ՄԱՐԳԱՐՅԱՆ,
խորհրդի քարտուղար

Հ. Գ. Խոր ափսոսանք ենք հայտնում Ա. Բլեյանի նման շրջանավարտ տալու համար եւ ներողություն խնդրում մեր ժողովրդից:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

ԼՈԲԲԻՈՍ

Ստրկության շահերը «աղախով» ձեռքերու մէջ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Նախորդ մեր համարում տվել Լիսի լրատվություն՝ ԱՄՆ-ում հոգաս Այրիջանի լոբբիզմով զբաղվող մարդկանց մասին, իսկ այսօր՝ ավելի լայն տեղեկություններ՝ մեկնաբանությամբ:

գտնել հանի մը նախկին դեսպան դառնոնք լծելու համար Ստրկության շահերու դաշտանութեան: Սակայն, այնպէս կը թուի, թէ Այիեի կառավարութիւնը մասնաւոր «շեռեն» ունի իր նախագահին նկարագրով ու վատակով մարդիկ գտնելու: Եւ իրօք, կը դարձուի, թէ Ստրկության շահերն կամ հարցի մասին շատ գաղափար չունի. իր այդ անհեղնութեան համար ալ կը սպասուի ամենական 3000 տարուի վարձատրութեան մը:

Պրն. Դիբրնզն, հակասակ իր անհեղեակ ըլլալուն, արիւ ասիրեռով ալ իր հիրը մտցուցած է հարիւնի գործերու մէջ, օրինակ. 1992 ին դրն. Մրէֆի հետ անգլիական Քոնֆորդ օդանաւ մը առնելով գացած է Լիբիա, եւ անկէ բերած է հարիւնի դաշնագիրներ: Պրն. Մրէֆի եւ իր երկու գործակիցներ դատապարտած են 70 հազար տարի տարսեմ վճարելու Մ. Նահանգներու կողմէ Լիբիոյ շրջափակման օրէնքը խախտած ըլլալնուն համար:

Պրն. Մրէֆի, ունենալով բերան եւ հեռակայութիւն, վարձած է նաեւ ոչ միայն նախկին կոնգրէսմէն մը Ռիչիրտ Ակերմանի՝Էր. ու իր դաշնակցած է Կոնգրէսի մէջ շահասակութեան մը հետեւանքով:

Մաք անցեալով, խարիսխներու եւ խարդախներու առաջին գործերէն մէկը դիտի ըլլար դաշնակցիլ ամերիկեան Կոնգրէսի մէջ վերացնելու համար 907 դ հատուածը 1992 ին հաստատած «Յելցին Սրիտոր Էֆ»ին, որ կ'արգիլէր ամերիկեան կառավարութեան ուղղակի դեսպանին դեսպանին բարեխիղճական օժանդակութիւն կատարել Ստրկության Սահմանի կայի Ներկայացուցիչներու: Տոնը հաւարկեց այդ որոշումնագրին վրայ եւ ոչ միայն դատապարտեցաւ այդ արգելքը, այլ ապելին ըլլալով որոշեցաւ 25 միլիոն տարի ալ զեղչել Թուրքիոյ կատարելիք օժանդակութիւնէն: Ուրեմն, այնքան ասեն որ Թուրքիա կը դարձէ շրջափակումը Հայաստանի դէմ, կը բանդագէտ մարդկային խարդախներ եւ չի լուծեր Գլուխոսի հարցը. այսինքն կը կորցնէ 25 միլիոն տարի:

Քուարկութեան այս դիմաց ալ խարդախեց Բիլլոյի նախագահին հանրապետական ներկայացուցիչ Ջան Փորթը: Այս նշանակալից յաջողութեան համար մասնագիտական հմտութեամբ Ուաշինկրթնի մէջ աշխատեցան Հայկական Համագումարն եւ Դէյվիդ Ռաֆլրզի, որոնք կը յայտնեն, թէ Ստրկության կառավարութիւնը դարձնելու մը կնքած է «Արմ-Գլոբուս Ինթրնէշընլ» ընկերութեան հետ, «ամերիկեան կառավարութեան եւ ամերիկացի ժողովրդի աչքին դրական ներկայացնելու Ստրկության Հանրապետութիւնն ու անոր ժողովուրդը»:

1992 ին Ստրկության վարձած էր նաեւ Էյր Սիրոն անունով հարիւնի վաճառական մը եւ նախկին կոնգրեսմէն Ջան Մրէֆին. որ կաւառակերութեան համար դատապարտած էր երեք տարի բանտարկութեան եւ 20 հազար տարի տուգանքի: Այս երկու տարակները հաստատած են կազմակերպութիւն մը Ստրկության Ուսումնասիրութեան Հիմնարկութիւն անունով. որուն կեդրոնը կը գտնուի Արմ-Գլոբուսի Նիւ Եորքի գրասենեակին մէջ: Համաձայն իրենց դիրքորոշագրին. անոնք 300 հազար տարի դիտի ծախսեն հանրային յարաբերութեանց համար. 250 հազար տարի վարձ դիտի վճարեն Ռաֆլրզ եւ Գլոբուս Ինթրնէշընլ ու Հայ Ազգային Կոմիտէն (Արմինիրն Ասամբլի) ու Հայ Ազգային Կոմիտէն (Արմինիրն Նեբրնդ Քմիրի): Սակայն, յիշեալ կազմակերպութեանց հրատարակած հաղորդագրութիւններու ամբողջութեամբ կը սեփականացնեն յաջողութիւնը ամէն մէկը իր կազմակերպութեան հաշուոյն: Իրականը՝ կազմակերպութիւն աշխատեցաւ ասանձին առանց ներդաշնակելու իր գործը միս կազմակերպութեանց հետ, եւ այսօր ալ մենաշնորհի կ'ենթարկուի իրագործուած յաջողութիւնը: Այդ հաղորդագրութեանց մէջ ամբողջութեամբ անտեսուած է այն դարագան, որ կոնգրէսմէն Փորթը առաջին անգամ ըլլալով հայկական հարցերով զբաղիլ սկսած է շուրջ ՌԱԿ ի դիմաւորներէն Ռոբէն Թերգեանի եւ մեր հանգուցեալ դիմաւորներէն Օննիկ Նորհասի դիմաց Արմէն Նորհասի. որոնք ոչ միայն Շիմագոյի մէջ կոնգրէսմէն Փորթի ընտրատարածքին առատաձեռնօրէն սատարեցին, այլեւ հանգանակութիւններ կազմակերպեցին

ԱՆՀԱՏԱՐԱԾ

Արդարացում չի լինելու եւ ոչ մեկիս

Հուսալքության ծայրահեղ աղաղակը մնաց անուշադիր

88 ի հացադուլավորները համաժողովրդական սեր, հարգանք ու հոյակ էին վայելում: Նրանցից ամենաերեւելին համարյա տրոց դասը կարգվեց, նրա օրհնանքը ստանալու էին գալիս նորադարակներ, նորածիններ էին հասցնում նրա մոտ, որ անուն տար, եւ քանի որ Հայոց առաքելական եկեղեցին այն երբանում էլ անհաղորդ էր ու հեռու, ցերեկային սովահարության ասպետն իր վտիտ ուսերին վերցրեց նաեւ հոգեւոր գործչի առաքելություն՝ Տերունական աղոթքի խոնարհաստ տեսքը փակցնել տալով օդերայի բենզի դատին: Այդտեղից բարունակվեց նրա այլեւս կուսակցուած երբ դեռի «Գրություն», ավելի ու ավելի վեր...

Յորը տարի անց, հենց նույն օրերին, նույն հրադարակում հացադուլի ծայրահեղ քայլին դիմեցին հայուհիներ, ու նրանց դահանջը համազգային չէր, այլ դարգ ու մարդկային՝ ադրելու, աշխատելու իրենց իրավունքն էին ուզում դաշտպանել, իրենց ոնտահարված դասվի տերն էին ուզում մնալ:

Լրագրային հասուկենս արձանագրումներից զատ եւ ո՛չ մի արդյունք, ո՛չ մի դրական արձագանք: Հուլիսի 2 ին վիճակի խիստ վաքարացման դաշտաոով հիվանդանոց տեղափոխվեց կիսամեռ Նորա Ավանեսովան, հուլիսի 6 ին հիվանդանոց տարան Ամալյա Շիբոյանին, ավելի ուշ՝ նրանց միացած ծերբակալված ազատամարտիկների ծնողները՝ նույնպես հեռացան այնտեղից:

«Կարմիր խաչի» գույնզգույն գրասենյակները («Լրագրի» դիմուկ բնորոշումից օգտվեմ) հանգիստ թողնեմ՝ օտար են, մեր ցավը չեն հասկանա: Հենց հացադուլի արգասիք «Գրություն՝ ունն» ինչ ասաց եւ արեց: Իրենց դրոշին «Սեր եւ միություն» դաջած ասիրամականնե՝ն ինչ մտածեցին հեռավոր, թեեւ «անհարազատ» քույրերի ու նրանց բախտակիցների մասին: Չէ՞ որ նրանց համար փակ դռներ չկան, բավական էր մի քանի կամակոր կանայք միանային, գործի դնեին «ոտը ոտին գցելու» իրենց հուժկու զենքը, թերեւս կարողանային՝ ազդել ՀՀ քաղաքացիական ավիացիայի նշանակովի սատարողի վրա, առավել եւս, որ նոր ուղեկցորդուհիներ աշխատանքի ընդունելու հիմնական դայմանը վերոնշյալ գործողությունը հնտրեն ու վարժ կատարելն է: Սահմանադրադաշտական իրենց հավատիացումներն օր առաջ հրադարակելու համար եռաբար ու քառաբար հերթի կանգնած դերասան-երգիչ-նկարիչ-բանաստեղծնե՞ր հարդ...

Ամբողջ երկրի ու աշխարհի աչքի առաջ հայ կանայք իրենց կամավոր մահվան էին դատադարտել՝ ընդամենը մասնագիտությամբ աշխատելու դահանջով: Հայրենիքի համար կռվի ելած իրենց զավակներից լուր ստանալու կամ լուր հասցնելու համար դահանջով հայ մայրեր ու հայրեր, կանայք ու քույրեր:

Ու գոց եղավ ամեն ինչ: Անմարդկային, անբարոյական ու անդաշավարք լռություն, անտարբերություն, ցինիզմ:

Պաշտոնական դեսական խուլ դարիսները դաշտդանված են հուսալի, հրերի դես անմատչելի են մեծավորները, եկեղեցին նույնդես մերժեց իր գիրկն ու դռները բացել... ինքնաս դանների առաջ:

Հոգեւոր հովիվներ եւ Վեհափառ Տեր, ներեցեք մեղավորիս, եթե հանդուգն ու անկաշկանդ է խոսքս: Այդ դեդքում, դարերի խորքից ինչդե՞ս գնահատեմ հարա Հոփսիմե, Գայանե եւ Շողակաթ կույսերի վարքը: Իրենց բնական մահո՞վ մեռան նրանք ու արքացան: Կամ՝ անդնդախոր ծորերն ու ելիրատի մրրկածուփ ալիքների մեջ նետվող տասնյակ ու հազարավոր հայուհիներ նույնդե՞ս մերժված են իրենց հավատի տաճարների կողմից: Չէ՞ որ ուզում էին ադրել նրանք, սակայն հավատն ու դատիվը վեր դասեցին Աստծո դարգեւած այն առյականված կյանքից: Կամ՝ երբ Վազգեն Ա կաթողիկոսը Մոսկվա մեկնեց հյուրանոցային հացադուլավորներին այցելության եւ Հայրադետական օրհնանք տալու, դե՞մ գնաց արդյոք հիսանենական կանոնին: Թե՞ հայենի տղամարդկանց դարագային մի բան է ասում կանոնը, ոչ հայենի կանանց դարագային՝ մեկ այլ բան:

Դարեր ի վեր բարոյական ներքին զսդանակները լգրված օրենք են ստեղծել, եւ հայերը հեռանգել կարիրիշ տեղ են անցկացրել իրենց ուրախությունը, հանդեսը, հրավերքը, եթե հարեւանի տանը դժբախտություն է եղել կամ ծանր հիվանդ:

Ո՞չ, նոր են ժամանակները, եւ «նոր հայեր» են երեւան եկել, ովքեր օրերով ու շաբաթներով տանջահար, սովահար մարդկանց աչքի առաջ, նրանց քթի տակ երգով ու դարով, դիոլ զուռնով, «համաժողովրդական ցնծությամբ» դիտի նախատոնեին «ամենա... ամենա...» սահմանադրությունը, որով էլ մուտք գործեցին Այրկովկասյան Ջամահիրիա: Կենտրոնն էլ այս հրադարակն է, էլ որտե՞ղ իր գերհավատարմությունը ցուցադրեր «Բրաբիոնը»: Խաչիկ Դաշտենցը եւ Մուշեղ Գալշոյանն ինչդե՞ս դիտի մղկային, որ «էրգրի» մոռացված ծաղիկը՝ ճնճղության, գեղեցկության եւ կյանքի խորհրդանիշը, վերածնդից կարճ ժամանակ անց դալատակաս սենեկադեսի դատկանելիք է դառնալու:

...Երկու տարի առաջ նման ծայրահեղ քայլի դիմելու շեմին էի կանգնած, փառ Աստծո, սթափեցրեց Սրբ. Ժենիցինն՝ իր զորեղ փաստարկներով. տոտալիտար համակարգը դարգադես արհամարհում է նման քայլը, որովհետեւ մազայափ իսկ չի վախենում հասարակական կարծիքից եւ ցանկացած դահին կարող է «հասարակական» հակադարձ կարծիք ստեղծել: «Ժողովուրդների բանտ» ցարական Ռուսաստանում էր, որ նույնիսկ սիբիրյան Ցենտրալում (Կենտրոնական բանտ) հայտարարած հացադուլը դիտի փոքրոկեր մայրաքաղաքային ու գավառական մամուլը, գիմնազիական եւ համալսարանական, մտավորական ամենալայն շրջաններ, հանգեցնելով տարամակարդակ դաշտնաձգությունների:

Ավաղ, ոչ «ժողովուրդների բանտում» ենք ադրում, ոչ «չարիքի կայսրությունում», այլ... ազա՛տ, անկա՛խ, ժողովրդավարակա՛ն Հայաստանում, ուր դարակազմիկ մեծագործություններ են կատարվում ու այնդիսի «մանրուք», ինչդիսին կանանց, տարեց մարդկանց հացադուլն է, ամենեին չդեսէ է եղի «դեսականության կայացումից»:

«Գրության» անիվն իր զցած ակոսից չի ելելու, «Շամիրամն» արագեղեցիկային իր խնդիրներն ունի, «Բրաբիոնը» առեւտրա մշակութային իր խնդիրները, դեսությունը չի խառնվում եկեղեցու գործերին (առնվազն՝ 10 հարգական նշան), ուստի եկեղեցին նույնդես ձեռնդահ է մնալու, մտավորական դասն ինքնադահվման տենդի մեջ էր եւ է, տուտվ նորանոր նշանակովի սատարողներ են կարգվելու ամենուր, այնդես որ, ամենայն հարգանքի արժանի ծնողներ, քույրեր արիասիրտ, ճիշտ վարվեցիք, բողնելով զանազան ներկայացումների այդ հրադարակը, ուր եմ, ուժ հավաքեք եւ նախադասրաստվեք շատ ավելի ծանր օրերի, որոնց անխուսափելիությունը շատ շուտով հավատի կդառնա ցանկացած քայլափոխի:

Եւ մինչ այդ ու մանավանդ դրանից հետո ներում ու արդարացում չի լինելու եւ ոչ մեկիս: Ոչ մեկիս:

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՖՐԱՆՍԻԱ

Ժակ Շիրակը որոշել է հեռանալ ժողովրդից

Ֆրանսիայի նախագահը հրաժարվել է հատուկ ինքնաթիռից, կիսով չափ կրճատում է թիկնապահներին եւ փողոցում կանգ է առնում կարմիր լույսի առջեւ

Երբ Ֆրանսիայի նախագահները, Շաղ դր Գոլից սկսած, իրենց նկարագրով, շարժուձեւերով, անառարկելիությամբ, կառավարման ոճով եւ, ի հարկե, անսահմանավակ իշխանությամբ նման էին «հանրապետական մնայողների», առյս 62 ամյա Ժակ Շիրակը, որ 1.5 ամիս առաջ է ընտրվել Ֆրանսիայի նախագահ, ավելի շատ նման է սովորական ժողովրդավարի:

Չուտով եւ հեղինակեան Ֆրանսուա Միտերանը երբեմն անկեղծորեն զանգվում էր մենակությունից, որին դատապարտված է կառավարիչը: Եւ դա անում էր չնայած այն բանին, որ մշտապես շրջապատված էր դրանիկների խիտ օղակով, որոնք ճնում էին նախագահին, փորձելով զուշակել նրա ցանկությունները, ստանալ դատողություններ, դարգելներ եւ արժանանալ բարեհաճության:

Ընդհակառակը, անկեղծ եւ տարբերվելով Ժակ Շիրակն իրեն շրջապատել է համեմատաբար երիտասարդ եւ գործունյա աշխատակազմով, որտեղ գլխավոր դերերից մեկը խաղում է իր 32-ամյա դուստր Կլոդ Շիրակը, որը դատասխանատու է իր հոր նկարագրի համար:

Նախագահական աթոռին բազմելով, Շիրակը խիստ դարձեցրեց բարդ արտաքակարգերը, շրջագայությունների, հանդիպումների, բանակցությունների ծեսերը: Ֆրանսիայի նախագահի կարծիքով, երկրի վարկը բնավ չի տուժի, եթե պետության ղեկավարը հրաժարվի զանազան դատվո դատական խմբերից եւ այլ ավելորդություններից:

Որոնես պետության ղեկավար Ժակ Շիրակը իր առաջին դատաստանական այցը դեպի Միացյալ Նահանգներ կատարեց ուղերարձին «Կոնկորդ» թիմնաթռիռով, շարունակելով ուղեւորների հետ մնկտեղ: Ընդունելն նա իրեն ներկայացված դատաստանական անձանց ցուցակից ցնցեց խորհրդականների եւ աշխատակիցների ազգանունների երեք հատորը: Ուղեւորության ընթացքում նա հրաժարվեց նաեւ կազմի ջոկատի ուղեկցությամբ, կիսով չափ կրճատել է պետության ղեկավարի 103 ժանդարմից բաղկացած անվտանգության հատուկ ծառայությունը, որն ստեղծել էր իր նախորդը 1983 թ.: Բացի դրանից, նախագահական «Միտրոնեն» այժմ կանգ է առնում կարմիր լույսի առջեւ:

Շիրակը կրճատել է իր աշխատակազմի եւ նախարարների կաբինետի հատիվները: Ժակ Շիրակին շրջապատում է 23 մարդուց կազմված բիմ, մինչդեռ Միտերանի աշխատակազմում կար 55 մարդ: Ըստ որում, բիմի աշխատանքն այնքան է կազմվող նախագահական որոշումները, որոնք հրապարակվում են նախագահական թանկարժեք հրամակարգից, որը հուսալիորեն դատասպանված է բնանիների գաղտնի ունկնդրումից: Իր օգնականների հորդորներին ի դատասխան նախագահը հայտարարեց, որ ինքը հյուրանոցային համարից միշտ էլ կարող է զանգահարել որ որ հարկն է:

Նոր նախագահը ոչ միայն մտադիր է հայրենակիցների հետ մնկտեղ անձամբ թոչել կանոնավոր ուղերթներով, այլեւ վերացրել է օդանավային այն ջոկատը, որն սպասարկում էր նախարարներին:

Միաժամանակ Ժակ Շիրակը, որը մարդկանց միջավայրում դեմ է հայտնվի բիկնարտահների հզոր ջոկատի ուղեկցությամբ, կիսով չափ կրճատել է դեպարտի 103 ժանդարմից բաղկացած անվտանգության հատուկ ծառայությունը, որն ստեղծել էր իր նախորդը 1983 թ.: Բացի դրանից, նախագահական «Միտրոնեն» այժմ կանգ է առնում կարմիր լույսի առջեւ:

Շիրակը կրճատել է իր աշխատակազմի եւ նախարարների կաբինետի հատիվները: Ժակ Շիրակին շրջապատում է 23 մարդուց կազմված բիմ, մինչդեռ Միտերանի աշխատակազմում կար 55 մարդ: Ըստ որում, բիմի աշխատանքն այնքան է կազմվող նախագահական որոշումները, որոնք հրապարակվում են նախագահական թանկարժեք հրամակարգից, որը հուսալիորեն դատասպանված է բնանիների գաղտնի ունկնդրումից: Իր օգնականների հորդորներին ի դատասխան նախագահը հայտարարեց, որ ինքը հյուրանոցային համարից միշտ էլ կարող է զանգահարել որ որ հարկն է:

Նոր նախագահը ոչ միայն մտադիր է հայրենակիցների հետ մնկտեղ անձամբ թոչել կանոնավոր ուղերթներով, այլեւ վերացրել է օդանավային այն ջոկատը, որն սպասարկում էր նախարարներին:

Միաժամանակ Ժակ Շիրակը, որը մարդկանց միջավայրում դեմ է հայտնվի բիկնարտահների հզոր ջոկատի ուղեկցությամբ, կիսով չափ կրճատել է դեպարտի 103 ժանդարմից բաղկացած անվտանգության հատուկ ծառայությունը, որն ստեղծել էր իր նախորդը 1983 թ.: Բացի դրանից, նախագահական «Միտրոնեն» այժմ կանգ է առնում կարմիր լույսի առջեւ:

Շիրակի դարձությունը ձգտումը, զանձարանի համար ավելի որոշ արտոնություններից հրաժարվելը, դեմոկրատական մոդային միտումներին տրվող տուրք չէ, ոչ էլ հայրենակիցների շրջանում հեղինակություն վաստակելու ձգտում: Այն արտացոլում է նոր նախագահի խառնվածքը, որին հարկավոր չեն իշխանության արտաքին խորհրդանշաններ եւ որը դատ էությունն անտարբեր է դատասների զգլխիչ դերձանքի հանդեպ:

«Իզվեստիա»

ԹՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրտեսական թույնն ընդդեմ հաղկեղի

«Սառը դատերազմի» տարիներին մեծ աղմուկ հանեց սկանդալային եւ դրերազական այն դեպքը, որի ընթացքում արեւելաեւրոդական հատուկ ծառայություններից մեկի գործակալն ադաեց բուլղարացի լրագրող եւ այլախոհ Գեորգի Մարկովին: Օրը ցերեկով Լոնդոնի կենտրոնում անհայտ գործակալի հովանոց ատրճանակից արձակված փոքր գնդակը խոցեց Մարկովի մարմնը, եւ նա անմիջապես մահացավ: Ինչդես ավելի ուշ դարձեցին բժիշկները, նա մահացել էր ոիցին սասիկ ներգործող թույնից: Բնությունը հայտնի բոլոր թույների մեջ ոիցինն իր ուժով գրաղեցնում է երրորդ տեղը: Հատուկ ծառայությունները դրանով ադաբազինվում էին Ջեյմս Բոնդին վայել գաղտնի գործողությունների անցկացման դեղում:

Մի քանի տարի առաջ գերմանացի բժիշկ Անդրեաս Էնգերտը (Քյոլնի համալսարանից) հետաքրքրվեց կենդանի օրգանիզմի բջիջների վրա ոիցինի ազդեցության առանձնահատկություններով: Կենդանիների վրա կատարած երկարատեւ հետազոտություններից ու փորձերից հետո նա հանգեց այն հետեւության, որ ավելային հանգույցների հաղկեղը բուժելիս որոնես բուժդատրատուկի հիմք կարելի է վերցնել հենց այդ լրտեսական թույնը:

Գերմանացի գիտնականը մշակեց թույնը մարդու ավելային հանգույցի հաղկեղային մաս ներարկելու մեթոդիկա եւ ոիցինի ներգործության սկզբունք: Դժվարությունն այն էր, որ թույնը հարկավոր էր օրգանիզմի հարկ եղած մասը մտցնել այնպես, որ հիվանդը չմահանա: Ինչդես հայտնի է դասական գրականությունից, ներարկված թույնի նկատմամբ նաեւ անհրաժեշտ է մշտական վերահսկողություն, որոնեսզի որեւէ չարիք չգործի: Քյոլնցի բժիշկը կարողացավ լուծել գիտնականի համար դժվարին եւ հիվանդի համար վտանգավոր այդ խնդիրները:

Էնգերտին հաջողվեց ոիցինը սերտորեն շաղկապել այն հակամարմինին, որն ինքն է ուուցքի բջիջներ գտնում ավելային հանգույցներում եւ միանում դրանց: Այնուհետեւ գործի մեջ է մտնում ոիցինը, կատարելն ոչնչացնելով ուուցքի բջիջները:

Այսպիսով, ոիցինը մարդասպան թույնից վերածվում է փրկարար միջոցի: Առաջին հիվանդներն արդեն ենթարկվել են ոիցինի բերադեւտիկ բուժընթացին: Սակայն, գերմանացի բժշկի կարծիքով, երբեմնի «մարդասպանի» նկատմամբ դեռեւս վերահսկողություն է հարկավոր:

«Իզվեստիա»

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Թուրք-բուլղարական համագործակցությո՞ւն

1985-1986 թթ. Բուլղարիայում թուրք փոքրամասնության նկատմամբ սկսված ճնշումների ու հալածանքների հետեւանքով Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ հարաբերությունները խիստ սրվել էին: Բայց «սառը դատերազմից» հետո, 1989 թվականից սկսած, Բուլղարիայի նոր վարչակարգը փոխեց իր դիրքորոշումը, եւ թուրքերի նկատմամբ սկսված հալածանքներին վերջ տրվեց: Կառավարությունը նորից ճանաչեց թուրք փոքրամասնության իրավունքները:

1989 թվականից սկսած երկու երկրների ղեկավարների միջեւ կայացել են բազմաթիվ հանդիպումներ: Պարբերաբար տեղի ունեցող հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունների, տարածաշրջանին առնչվող եւ միջազգային հետաքրքրություն ներկայացնող մի շարք խնդիրներ, ստորագրվել են միջդետական մի շարք համաձայնագրեր եւ արձանագրություններ: Այդ շփումների շրջանակներում, նախօրեն ծեռք բերված դայմանավորվածության համաձայն, վերջերս Սոֆիայում էր գտնվում նախագահ Ս. Դեմիրելի գլխավորած թուրքական ներկայացուցչական դատվիրակությունը: Նախ եւ առաջ այցելությունը նախագահ Ս. Դեմիրելը, դատասխանելով բուլղարական «էկո ինտերնեյշնլ» հանդեսի թղթակցի հարցերին, ասաց. «Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ հարաբերությունների զարգացման համար առկա են բոլոր հնարավորությունները: Երկու երկրների միջեւ անլուծելի որեւէ խնդիր գոյություն չունի»: Իսկ նախագահ Թոքյանը, Անկարայի էսենբոգա օդանավակայանում Դեմիրելը հայտարարեց. «1990 թվականից սկսած, Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ արտաքին առեւտրի ծավալը անհամեմատ աճել է, բայց չնայած այդ հանգամանքին, մենք գտնում ենք, որ այն դեռեւս բավարար չէ, եւ հարկավոր է ավելի ծավալուն դարձնել: Այցի ընթացքում կքննարկվեն առեւտրի եւ տնտեսության բնագավառներում հարաբերությունների զարգացման խնդիրները: Հանդիպումների ընթացքում արծարծվելիք հարցերի փաթեթում զգալի տեղ կհատկացվի Բուլղարիայում ապրող մեր հայրենակիցներին հուզող խնդիրներին ու Թուրքիայի կողմից այդ երկրում կատարվելիք ներդրումներին: Մենք կայցելենք թուրքերով խիտ բնակեցված շրջաններ եւ կծանոթանանք մեր հայրենակիցներին հուզող խնդիրներին: Ես հավատացած եմ, որ այցը երկու երկրների միջեւ բարիդրացիական եւ բարեկամական հարաբերությունների ամրապնդման մեծ խթան կհանդիսանա»:

Սոֆիայի օդանավակայանում թուրքական դատվիրակությանը դիմավորեցին Բուլղարիայի նախագահ Ժելյո Ժելեւը, կառավարության անդամներ, լրագրողներ եւ հասարակության ներկայացուցիչներ:

Սոֆիայի Բոյանա դալատում Դեմիրելի եւ Ժելեւի միջեւ տեղի ունեցավ առանձնազրույց, որը նախատեսվածից կես ժամ ավել տեւեց: Բանակցությունների ավարտից հետո նախագահներ Դեմիրելն ու Ժելեւը հանդես եկան հայտարարություններով: Ժելեւը նշեց, որ «Բուլղարիայի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների զարգացման հարցում զգալի առաջընթաց է ծեռք բերվել: Դրա ապահովման համար առկա էին բոլոր տեխնիկական հնարավորությունները: Քաղաքական ու տնտեսական հարաբերությունների զարգացման հնարավորություններին զուգընթաց քննարկվեցին հրատապ կարեւոր մի շարք խնդիրներ: Վերջին հինգ տարիների ընթացքում երկու երկրների միջեւ առեւտրի ծավալը 10 անգամ աճել է: Այդպիսի զարգացումը իր հետ բերել է նոր խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ եւս համաձայնություն ծեռք բերվեց»:

Իսկ նախագահ Ս. Դեմիրելը անդրադառնալով բանակցությունների արդյունքներին, հայտարարեց. «Այցը շատ կարեւոր է եւ ծիշտ ժամանակին: Մի հանգամանք, որը երկու երկրների միջեւ հարաբերությունների ամրապնդման առումով մեծ հեռանկարներ է խոստանում: Մենք դատասդանում ենք ՆԱՏՕ-ին անդամագրվելու Բուլղարիայի ձգտումը եւ այդ ուղղությամբ կծեռնարկենք անհրաժեշտ քայլեր: Մեր երկրների միջեւ հարաբերությունների զարգացման ու ամրապնդման ուղղությամբ գործնական քայլեր կծեռնարկվեն թե դետական մակարդակով եւ թե մասնավոր սեկտորի կողմից: Այդ գործընթացը մեր երկրների միջեւ բարեկամության ամրապնդման եւ թուրք ու բուլղար ժողովուրդների բարեկեցության բարձրացման ուղղությամբ մեծ խթան կհանդիսանա»:

Այցի երկրորդ օրը Դեմիրելը Բոյանա դալատում ընդունեց Բուլղարիայի թուրք համայնքների ներկայացուցիչներին: Այնուհետեւ այցելեց Բուլղարիայի խորհրդարան եւ հանդիպում ունեցավ խորհրդարանի փոխնախագահ Նորա Անանիեւայի եւ խորհրդարանի դատգամավորների հետ:

Այստեղ Դեմիրելը դիմելով դատգամավորներին, ասաց. «Թուրքիան իր հարեւաններից ոչ մեկի վրա այլ չունի: Բայց միեւնույն ժամանակ բույլ չի տա նաեւ հակառակ երեւույթը: Թուրքիան խաղաղասեր դետություն է եւ շրջանում հանուն խաղաղության դահդանման երբեմն իրակա նացնում է ռազմական գործողություններ: Մենք դայքարում ենք անջատական ահաբեկչության դեմ: Ա հաբեկչությունը համայն մարդկության համար դաշիժ է, եւ դրա դեմ դայքարելով, մենք ծառայում ենք ժողովրդավարությանն ու մարդու իրավունքների դատգանության վեհ գործին:

Բուլղարիան, ինչդես եւ Թուրքիան, ընտրել է ժողովրդավարության եւ ազատ շուկայական տնտեսության ուղին, որը մեր երկու երկրներին տվել է եվրոդական տան լիիրավ անդամը դառնալու հնարավորություն: Այս փոփոխություններին հաջորդելու է հարեւան երկրների հետ ազատ եւ բաց տնտեսական հարաբերությունների գործընթացը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ես հենց այժմ դիմում եմ բուլղար խորհրդարանականներին, եկեք վերացնենք Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ առկա սահմանը»:

Այնուհետեւ Դեմիրելը կրկին հանդիպեց նախագահ Ժելեւի հետ, որին հաջորդեց մամլո համատեղ ասուլիսը: Պատասխանելով լրագրողների հարցերին, Դեմիրելը ասաց. «Բուլղարիայի բնակչության 10 տոկոսը խոսում է թուրքերեն, իսկ 12 տոկոսը մահմեդականներ են: Բուլղարիայից Թուրքիա է գաղթել շուրջ մեկ միլիոն մարդ: 1989 թ. տեղի ունեցած զանգվածային գաղթը մեր երկրների համար դժվարին խնդիրներ առաջադրեց: Չնայած գոյություն ունեցող որոշ դժվարություններին, Բուլղարիայի թուրքերը այս երկրում ապրելու վերաբերյալ արտահայտում են իրենց վճռականությունը»:

Ապա անդրադառնալով Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ հարաբերությունների խնդրին, Դեմիրելը ասաց. «Բուլղարիայի հետ հարաբերությունների զարգացումը որեւէ մի այլ երկրի հանդեպանալու համար կամ ի հեծուկս նրա չի կատարվում, այլ մի միայն ծառայում է մեր երկու երկրների շահերին: Իսկ ինչ վերաբերում է Հունաստանի հետ հարաբերությունների խնդրին, ապա մեր երկու երկրների միջեւ բարեկամությունը դրա հետ որեւէ առնչություն չունի. Հունաստանի հետ հարաբերությունների հարցում մենք միմյանց թելադրել չենք կարող:

Ինչ վերաբերում է Թուրքիայի եւ Բուլղարիայի միջեւ սահմանը վերացնելու հարցին, ապա լավ կլիներ, որ այն տեղի ունենար մինչեւ եվրոդական միությանը միանալը»:

Հուլիսի 6-ին դատվիրակությունը վերադարձավ Թուրքիա:

ԳԵՐՄԱՆ ՇԱՐԲԱՏԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Համերգաշրջանի եզրափակիչ ակորդը

Կիրակի՝ հուլիսի 9-ին, Հայաստանի ֆիլհարմոնիկը Ջորջ Փեհլիվանյանն էր ղեկավարում

Ուշ հայտնի չէ, որ «Շեհերազադեն» մեծ հեմիաբասաց Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի սիմֆոնիկ գլուխգործոցն է: Սակայն այնպես հաճախ է կատարվում, որ շատ անգամ ընկալվում է ավելի շատ որպես «Զարմ ու մեկ գիշերվա» երաժշտական մեկնաբանություն, քան նվագախմբային կտավ՝ իր գեղեցկություններով: Բայց Ջորջ Փեհլիվանյանը, որն իր բնույթով նույնպես հեմիաբասաց է, երաժշտությանը հաղորդում է երբեմնի հմայքը: Հեմիաբը հնարավոր է, իրականությանը մոտեցված երևակայություն: Հեմիաբի մասերից դուրս եկ կարելի է լինել երևակայող, այսինքն՝ կերտել գեղարվեստական իրականություն եւ ունկնդրին սիրել մուտք գործել այնտեղ: Այդպիսին է նաև Փեհլիվանյանը, որն անսպասելիորեն երեսուն ժամանից՝ մասնակցելու Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի սիմֆոնիկ համերգաշրջանի փակմանը: Համերգը նվիրված էր Ֆրանսիային, շուտով այդ երկրի ազգային տոնն է, եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը հովանավորում էր այդ համերգը: Այդ ծրագրում ընդգրկված «Շեհերազադեն» արդարացված էր նրանով, որ հիմնված է 20-րդ դարի ավանդույթների ֆրանսիական (իմպրեսիոնիզմ) եւ ֆրանս-ռուսական (ի դեմս Ստրավինսկու) ծագումնաբանական ճյուղերից մեկի վրա:

Պողոսյան) զուգորդությամբ, տեմբրային գույների ծավալաանդրադարձային ոգեկի առկայությամբ: Չնայած բեմական նյութի խայտաբղեխությանը, «Շեհերազադեն» ստացվել է շատ ամբողջական ձեւով: Դա ունի երկու բացատրություն: Առաջինը նվագախմբային զարգացման ոլորտիկայի ոգեհանումն է, որն ի հայտ է գալիս ծովի հենց սկզբնական բեմայից (զարմանալի է, ասես բեմից զովություն փչեց, այնքան որ ուժեղ էր ձայնային էֆեկտը): Երկրորդ ոլորտաբար ներքին դինամիկան է, որը նոպասում է տարածական հնչանկարին: Դրա առավել տղավորիչ օրինակներ բվում կնշեմ սյուիտի երկրորդ մասը, որտեղ ներդաշնակ ներքին դինամիկան ստեղծվում է Կամիլ Սեն-Սանսին: Չգիտեմ, ոլորտահակա՞ն է արդյոք, որ այս տարի լրանում է նրա 160-ամյակը: Թավջութակի եւ նվագախմբի համար գրված հանրահայտ լյա մինոր առաջին կոնցերտում մենակատարը Վահրամ Սարաջյանն էր, որն արդեն հինգ տարի է, ինչ աղրում է ԱՄՆ-ում Նյու Յորքի մոտակայքում: Այս, կյանքը ցիրուցան է արել մեր հայրենակիցներին: Արտագաղթը հատկապես ծանր է անդրադառնում մշակույթի վիճակի վրա: Լավ է, որ գոնե երբեմն մեզ հնարավորություն ենք ունենում նրանց ունկնդրելու:

Վահրամ Սարաջյանը դասկանում է միջին սերնդի հայ առաջատար երաժիշտների թվին եւ անդրադարձ է միջին սերնդի հայ առաջատար երաժիշտների թվին եւ անդրադարձ է միջին սերնդի հայ առաջատար երաժիշտների թվին եւ ան-կատարողներից մեկն էր: Արվեստի հետ այդ բաղդաքաշահարի ներկայիս հանդիպումը ուրախացրեց. Սարաջյանն արտիստական հիանալի «վիճակում» է: Ուշադրություն գրավեց հոգեկան առանձնահատուկ մաքառությունը, որը բաղդաքաշահարին հնարավորություն է տալիս զերծ մնալ ամենն տեսակ տեխնիկական լարվածությունից: Նվագելու դահին մոռանալով ունկնդիրների ներկայության մասին: Սարաջյանի ստեղծագործական հասունությունը ողբերգական վերամբարձ բնույթ հաղորդեց Սեն-Սանսի ֆնարական դրամատիկ կոնցերտին: Իսկ բավ-ջութակի գեղեցկությունն ու երաժշտական շնչի խորությունն էլ ավելի էին ընդգծում նրա նվագի վիրտուոզ փայլը:

Ծրագիրն եզրափակեց Սեն-Սանսի երկմասանոց Երրորդ սիմֆոնիան (երգեհոնի մոտ էր Արթուր Ադամյանը): Կոմպոզիտորն այդ բախտալի երաժշտությունը գրել էր 1886-ին Ֆերենց Լիստի մահվան առիթով: Սակայն Փեհլիվանյանը չափից ավելի տուրֆ չտվեց վշտալի ոլորտիկային: Մինչդեռ երկրորդ մասի երկրորդ հանդիսավոր հատվածում նկատելի էր Լիստի ոչ ժամանակաշրջանի փողային եւ երգեհոնային երկերի հետ ստեղծված կապը: Սիմֆոնիան հնչեց միաձույլ կերպով, ասես կերտված լիներ խոշոր քարասալերից: Տղավորիչ էր նվագախմբի ամբողջ լարային խմբի համահարված հնչողությունը, որի փոխակերպում էր տեղի ունեցավ լուսաստվերի: Տղավորիչ էր նաեւ վերջնամասում կրասիցիստական ոճով նվագախմբի լիակազմ նվագը, որն ըստ արժանվույն ավարտեց սիմֆոնիան եւ հայ ֆիլհարմոնիստների ողջ սիմֆոնիկ հագեցած համերգաշրջանը:

ՎԱՂԵՏԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւանի կոնսերվատորիայի դոցենտ

ԱԶԳԱԳԻՐ

«Մոսկվա» կինոթատրոն

Այսօր եւ վաղը «Մոսկվա» կինոթատրոնում կցուցադրվի Ասոմ Էգոյանի «Դեր խոսքերով» 1989-ին ստեղծված 92 րոպեանոց գունավոր ֆիլմը (այդ մասին «Ազգը» գրել է հուլիսի 8-ի համարում): Սկիզբը՝ 11-ին, 13-ին, 15-ին, 17-ին, 19-ին: Ֆիլմի հայերեն տարբերակից բացի, կինոթատրոնը ժամը 11-ին եւ 19-ին այն ներկայացնում է բնագրով (անգլերեն): Էգոյանի ֆիլմերի հետահայաց ցուցադրման առաջին օրը (հուլիսի 8) ներկայացվեց նրա՝ 1993-ին ստեղծված «Էկզոտիկան»: Ֆիլմը դիտել ցանկացողներին տեղեկացնում ենք, որ կինոթատրոնի երկու դահլիճներից մեկը մինչեւ հուլիսի 16-ն ամեն օր, ժամը 12-ին, 14-ին, 16-ին, 18-ին ցուցադրում է հիշյալ ֆիլմը:

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

«Հայաստանի ճանապարհները» միայն ֆիլհարմոնիկի՞ համար են բաց

Մայիսի սկզբին մեր թերթ տեղեկացրել է, որ «Հայաստանի ճանապարհները» լայնընդգրկուն փառատոն է կազմակերպվում Հանրապետության տարածքում: Հարակից երկրներում, որի շրջանակներում ոչինչ ներկայացվեն երաժշտություն, նկարչություն, լուսանկարչություն եւ բատոն: Մշակույթի նախարարությունը դժվարացավ որեւէ տեղեկություն տալ փառատոնի ծրագրի մասին: Մեր հարցումները ոլորտցին, որ առաջիկա օրերին Հայաստանի Ֆիլհարմոնիկը կմեկնի համերգային շրջագայության «Հայաստանի ճանապարհները» փառատոնի շրջանակներում: Հյուրախաղերի ընթացքում համերգների դիրիժոր Ջորջ Փեհլիվանյանից տեղեկացանք, որ հուլիսի 14-ին 85 երաժիշտներից կազմված խումբը Անգլիայում կմասնակցի Չիչեսթր փառատոնին, այնուհետ հուլիսի 15-16-ին համերգներով հանդես կգա Ֆրանսիայում, կմեկնի Իտալիա, Պորտուգալիա, նորից կվերադառնա Ֆրանսիա: Ընդհանուր հաշվով նվագախումբը լրիվ կազմով 12 համերգ կտա, իսկ Ֆրանսիայում 6-7 համերգով կներկայանա նաեւ Ֆիլհարմոնիկի կամերային: 40-օրյա այս շրջագայությունը կընդմիջվի Հայաստան վերադարձով տեղի կունենա 95-96 համերգաշրջանի բացումը, իսկ նոյեմբեր ամսին նվագախումբը նորից կուղեւորվի Ֆրանսիա, որտեղ հանդես կունենա Փարիզի, Մարսելի, Լիոնի համերգային առաջնակարգ դահլիճներում:

Ի դեպ, Հայաստանի Ֆիլհարմոնիկը կիրակի օրը եզրափակեց իր 94-95 համերգաշրջանը: Մասնատ նշանավոր բաղվի 95-96-ի հյուրախաղերի կազմակերպման հարցերով սեպտեմբերի 9-14-ը Ֆիլհարմոնիկը կմեկնի Կիպրոս, սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 4-ը Իրան, որտեղ հանդիսությունից հետո որեւէ երկրներ նվագախումբ չի այցելել: Նոյեմբեր-դեկտեմբերին Ֆրանսիայում համերգներ տալուց հետո, հունվարին Ֆիլհարմոնիկը ամերիկյան երաժշտության փառատոն կանցկացնի Երեւանում, իսկ փետրվար-մարտին կլինի Ավստրալիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում: Ապրիլի 24-մայիսի 10-ը՝ նոր շրջագայություններ Մոսկվա-Սանկտ-Պետերբուրգ-Նոր Յորք: Ֆիլհարմոնիկի հետ հանդես կգան հայտնի դիրիժորներ Առամ Կարաբեկյանը, Բաֆֆի Արմենյանը, Ալեքսանդր Սիրանոսյանը:

Ա. Տ.

Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը կատարում է 1995-96 ուսարվա ընդունելություն հետեւյալ ֆակուլտետներում

- Միջազգային հարաբերություններ եւ բարգմանչություն
- Միջազգային իրավունք
- Միջազգային տնտեսական հարաբերություններ
- Միջազգային ինֆորմացիա եւ բարգմանչություն
- Պարտից լեզու, գրականություն եւ բարգմանչություն
- Իրավագիտություն
- Մենեջմենթ եւ մարկետինգ
- Բանասիրական
- Պատմություն եւ աշխարհագրություն
- Մանկավարժություն եւ տարրական կրթության մեթոդիկա
- Նախադպրոցական մանկավարժություն եւ հոգեբանություն
- Քիմիա եւ կենսաբանություն
- Դեֆեկտոլոգիա
- Կիրառական մաթեմատիկա

Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:
Ուսման տեւողությունը մանկավարժության եւ տարրական կրթության մեթոդիկայի, նախադպրոցական մանկավարժության եւ հոգեբանության ու դեֆեկտոլոգիայի ֆակուլտետներում չորս տարի է, մյուս ֆակուլտետներում հինգ տարի:
Համալսարանը կենված դպրոցականների հիման վրա կարող է գեղագանցիկ ուսանողներին եւ նոպատակային ասպիրանտներին ուղարկել սովորելու, իսկ երիտասարդ դասախոսներին վերապատրաստման Միլանի, Փարիզի, Մարսելի, Աթենքի, Սպլոնիկի, Թեհրանի եւ Վառնայի համալսարաններ, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ:
Դիմորդները ոլորտ է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. միջնակարգ կրթության վկայական, միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ, տեղեկանք առողջության մասին, վեց լուսանկար (3x4 սմ չափի):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հուլիսի 20-ը.
Քննությունները կանցկացվեն հուլիսի 21-ից 30-ը:
Համալսարանի հասցեն՝ Ալեք Մանուկյան (նախկին Մռավյան) 13:
Հեռախոսներ՝ 55-67-90, 55-46-80:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ

Ամբիոնի մոտ երիտասարդ գրականագետներն են

Գիտաժողով ԳԱԱ Մանուկ Աբեղյան գրականության ինստիտուտում

Վերջին շրջանում խիստ հազվադեպ են ուսանողական, երիտասարդական գիտաժողովներ կամ նմանօրինակ այլ միջոցառումներ կազմակերպվում: Պատճառներն, ինչ խոսք, շատ են, թե օբյեկտիվ եւ թե սուբյեկտիվ: Եվ ահա հուլիսի 6-ին ՀՀ ԳԱԱ Աբեղյան գրականության ինստիտուտում ակնառես եղանք գրականագիտական մի գիտաժողովի, որի մասնակիցներն էին մի շարք շնորհալի երիտասարդ գիտաշխատողներ եւ ասպիրանտներ: Զեկույցների բեմական բավականին ընդգրկուն էր: Քավալիերն սակավաթիվ ներկաների մեջ առանձնակի հետաքրքրություն առաջացրեցին Արծվի Բախչինյանի («Տերյանի ստեղծագործական լաբորատորիայի մի քանի հարցեր»), Կարապետ Վարդանյանի («Գուրգեն Մահարու «Այրվող այգիսաններ» վեպի մի քանի հարցեր»), Զարդար Մոկացյանի («Հոգեբուժությունը ըստ դոկտոր Ս. Սարոյանի»), Արտակ Մանուկյանի («Ներսես Շնորհալու «Հիսուս որդի» պոեմի ճշխարհայացքի եւ գեղագիտության մի քանի հարցեր»), Հերիքնազ Ոսկանյանի («Ներսես Շնորհալու վարքը») եւ Կաշլեն Ռաֆայելյանի («30-ականն թվականների բոնությունների արտացոլումը խորհրդային գրականության մեջ. Բուլգակով, Պաստերնակ, Ռոբակիձե») զեկույցները, որոնց շուրջ շահագրգիռ բանավեճ ծավալվեց գրականագետների հին ու նոր սերունդների ներկայացուցիչների միջեւ:

Եզրափակելով երկօրյա գիտաժողովը ակադեմիկոս Ջրբաշյանը շեշտեց վերջինիս կայացման փաստը, հույս հայտնելով, որ այդուհետ նման միջոցառումները ոլորտական բնույթ կկրեն. ամբիոնը հանձն կդրամադրվի երիտասարդ գիտնականներին: Նշենք նաեւ, որ կոնֆերանսը կազմակերպվել էր գրականության ինստիտուտի գիտխորհուրդը, բանասիրական գիտությունների բեկնածու Սուրեն Աբրահամյանի ջանքերով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՇՆՏԻՍՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹ

Հաղթեցին դարաբաղցիները

Հուլիսի 2-ին Երեւանի մարզահամերգային համալիրի փոքր դահլիճում տեղի ունեցավ «Շարմ» առեւտրամշակութային ընկերության կողմից կազմակերպված ուրախների եւ հնարամիտների ակումբի 3-րդ հանրաքեսական առաջնության կիսաեզրափակիչ խաղը՝ Երեւանի «Հասարակ ոռմանտիկներ» եւ Լեռնային Դարաբաղի ոչեսական համալսարանի թիմերի միջեւ: Այս խաղը նշանակալից էր նրանով, որ հանրաքեսական առաջնության պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ «միջազգային» խաղ: Մրցութային դասակազմի անդամներն էին Սանիսլավսկու ռուսական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանը, «Շարմի» տնօրեն Գագիկ Բունիաթյանը, Հայաստանի պետական էստրադային թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Գրիգորյանը եւ ժողովրդական արտիստ Սամվել Շանչուրյանը: Չնայած այդ մեծ դահլիճում հավաքվել էր ոչ մեծաքանակ հանդիսատես, այդուհանդեպ մրցույթը լցվեց երիտասարդների ջերմեռանդ ծափողջույններով եւ վանկարկումներով: Երկու թիմերն էլ մարտականորեն էին վարում խաղը, սակայն դարաբաղցիներին հաջողվեց առաջ անցնել: Խաղից հետո երկու թիմերը ողջագուրվեցին «Ռոմանտիկների» հանդեսարանում եւ շամպայնների դայթյունների «տակ» միաձայն հայտարարեցին՝ «Հաղթանակեց բարեկամությունը»:

ԱՐԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՀԿ

Մարզական

ԲԱՍԿԵՏԲՈԼ

«Գլոբտրոտերսը» 69 տարեկան է

ԳԵՎՈՐԳ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վանկուվեր, Քանադա

Այս տարի «Հարլեմ Գլոբտրոտերս» բասկետբոլի թիմը տոնում է իր ծննդյան 69 ամյակը: Թիմը տոնակատարությունը նշելու է եվրոպական շրջայցով, որի ընթացքում կրկին կհիացնի իր բազմահազար երկրպագուներին: Հարլեմ անունը կրում է Նյու Յորքի բաղամասերից մեկը, և շատերը կարծում են, թե «Հարլեմ Գլոբտրոտերսը» ծնվել է Նյու Յորքում: Բայց դա այդպես չէ: Մեծ հեղինակություն ձեռք բերած բասկետբոլային այդ թիմը ստեղծվել է 1927-ի հունվարի 7-ին, Չիկագոյում: Այդ օրը մի գեր և կարճահասակ մարդ Արե Սաղերշայնն անունով, հավաքելով հինգ բասկետբոլիստների, մտցնում է մի հին ավտոմեքենա և բռնում ուղեւորության ճանապարհը: «Գլոբտրոտերսը» ոլորվում է Ամերիկայի մի շարք քաղաքներում ու շրջաններում: Սաղերշայնի հայրը, լինելով դերձակ, խաղացողների համար կարում է կարմիր-սպիտակ-կապույտ գույնի մարզազգեստներ: «Գլոբտրոտերսը» իր առաջին ուղեւորության ընթացքում անցկացրած 117 խաղերից 101-ը շահում է: 1929 թ. թիմում հայտնվում է մեծն Իմնեն Ջեկսոնը, որը տիրապետելով անչափ բարձր տեխնիկայի, մրցակիցներին և հանդիսականներին աղբեցնում էր իր արագ և ճարպիկ հնարքներով: Թիմը շուտով Ամերիկայում մեծ համբավ է ձեռք բերում: Բայց

«Գլոբտրոտերսի» փոքրիկ խումբը շարունակում է շրջել փոքրիկ ավտոմեքենայով, որի մեջ խաղացողները ճաշում և քնում էին: Բանն այն է, որ 30-ականներին Ամերիկայի հյուրանոցները և ճաշարանները մերժում էին ընդունել սեւամորքներին, իսկ «Գլոբտրոտերսը» համալրված էր միայն սեւամորթ բասկետբոլիստներով: «Գլոբտրոտերսը» ոչ ոլորտնական թիմ էր: 1935 թ. առիթ ներկայացավ, որ «Գլոբտրոտերսը» ուժերը չափի NBA-ի չեմպիոն Բոստոնի «Սելտիկս» թիմի հետ: Երբ հաշիվը հավասար էր 32-32, «Սելտիկսը» ընդմիջում դուրս եկավ, և երբ ժամանակը լրացավ, վախենալով, որ կարող է դարձվել սիրողական մի թիմի ու հեղինակազրկվել, նախընտրեց չշարունակել խաղը: Բայց 1940 թ. «Գլոբտրոտերսը» նորից հանդիպեց երկրի չեմպիոնին, այս անգամ Բոստոնի «Բրուինզ» թիմի հետ և հաղթելով հայտարարեց, որ աշխարհի չեմպիոնը իրենք են: 1949-ին «Գլոբտրոտերսը» միջազգային առաջնությունում արդեն հայտնի թիմ էր, որը իրար ետեւից ռեկորդային թվով խաղեր էր անցկացնում: Այդպես, Ալյասկայում հինգ օրում թիմն անցկացնում է 14 խաղ: «Գլոբտրոտերսը» դիտվում է Եվրոպայում, Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում: Ռիո դե Ժանեյրոյում թիմի ելույթներին հետեւում են 50 հազար մարզասերներ, Բեռլինում 75 հազար: Նաստնիել Կլիֆտոնը դառնում է 40-ականների առաջին սեւամորթը, որն իրավունք է ստանում մասնակցել NBA-ի մրցումներին: Նա ստիպված լինում է սեւամորթների իր թիմը:

Տարիների ընթացքում «Գլոբտրոտերսի» խաղերը վերածվում են մարզահամերգային շոուի, որի ընթացքում բասկետբոլիստները ցուցադրում են ոչ միայն մարզական իրենց վարպետությունը, այլեւ գեղարվեստական ունակությունները: Նրանք սկսում են դարձել, նվագել: Երեւանցիներին նույնպես բախտ է վիճակվել 80-ականներին դիտել նրանց շոուն: «Գլոբտրոտերսը» այսօր էլ ժողովրդի կողմից սիրված թիմ է, որը կոչված է զվարճացնելու հազարավոր մարդկանց:

ԹԵՆԻՍ

Սամփրասը կրկին մտնում է հունի մեջ

Ավարտվեց Ռիմբլդոնի մրցաշարը, որը մտնում է «Մեծ մրցանակի» ծրագրի մեջ: Կանանց մրցաշարում, ինչպես և Ֆրանսիայի բաց առաջնությունում եզրափակիչ մտան Շտեֆի Գրաֆը և Արանչա Սանչեզ-Վիկարիոն, երկու բենիսուհիներ, որոնք անհաշտ պայքար են մղում աշխարհում ուժեղագույնը լինելու համար: Գրաֆը 5 անգամ տիրել էր Ռիմբլդոնի առաջին մրցանակին, իսկ Սանչեսն առաջին անգամ էր դուրս գալիս եզրափակիչ: Հանդես ու անգիջում մրցավեճն ինչպես և «Ռոլան Գարոսի» մրցաշարում ավարտվեց Գրաֆի հաղթանակով, որը 6-րդ անգամ նվաճեց «Ռիմբլդոնի գլխավոր մրցանակը»: Շտեֆի Գրաֆը շարունակում է գլխավորել կանանց համաշխարհային դասակարգման ցուցակը:

Տղամարդկանց եզրափակիչ դուրս եկան ամերիկացի Փիթ Սամփրասն ու գերմանացի Բորիս Բեկերը: Կիսաեզրափակիչում Սամփրասը 5 խաղափուլում դժվարին հաղթանակ տարավ խորվաթ Գորան Իվանիշեւիչի նկատմամբ, իսկ Բեկերն առավելության հասավ աշխարհի թիվ 1 բենիսիստ, ամերիկացի Անդրե Ագասիի նկատմամբ: Եզրափակիչ մրցավեճն անցավ 40 աստիճան ջերմության պայմաններում: Առաջին խաղափուլը, որը տեւեց 46 րոպե, ավարտվեց Բեկերի հաղթանակով: Սակայն հաջորդ երեք խաղափուլերում զգացվում էր, որ գերմանացի բենիսիստը, որը մեծ ուժեր ծախսեց Ագասիին հաղթելու համար, գերհոգնած է: Չկար նախորդ օրվա ոգեւորվածությունը: 2-րդ խաղափուլը տեւեց ընդամենը 27 րոպե և Սամփրասը հեշտությամբ հաղթեց 6-2 հաշվով: Երրորդ և չորրորդ խաղափուլերում էլ ամերիկացու առավելությունը շոշափելի էր, նա առավելության հասավ համապատասխանաբար 6-4 և 6-2 հաշիվներով: Ընդհանուր հանդիպումը տեւեց 1 ժամ 45 րոպե: Այսպիսով աշխարհի նախկին ուժեղագույն բենիսիստ, 23-ամյա Փիթ Սամփրասը երրորդ անգամ անընդմեջ հաղթող ճանաչվեց Ռիմբլդոնի մրցաշարում: 80-ականներին այդ հեղինակավոր մրցաշարում 3 անգամ առաջին մրցանակակիր է դարձել նաեւ Բորիս Բեկերը: Փիթ Սամփրասը կրկին հունի մեջ է մտնում և թերեւ է իրեն վերադարձնել աշխարհի ուժեղագույն բենիսիստի տիտղոսը:

Կանանց զուգախաղերում հաջողությունն ուղեկցեց Արանչա Սանչեսին (Իսպանիա)-Յանա Նովոտնա (Չեխիա) միջազգային երկյակին: Տղամարդկանց զուգախաղերում երրորդ անգամ անընդմեջ Ռիմբլդոնի մրցաշարի հաղթողներ դարձան ավստրալացիներ Տոդ Վուդբրիդը և Մարկ Վուդֆորդը:

ՖՈՒՏԲՈԼ

Անորոշ վիճակ մինչեւ վերջին դահը

ԳԵՎՈՐԳ ԱՎԱՄՅԱՆ
Գրենոբլ, Ֆրանսիա

Անգլիայի վերջին առաջնությունում մինչեւ եզրափակիչ 42-րդ տուրը չեմպիոնի հարցը անորոշ վիճակում էր: Անհաշտ դայլար էր ծավալվել «Մանչեսթր Յունայթեդ» և «Բլեկբուրն Ռովերս» թիմերի միջեւ: «Ռովերսը» 1 միավոր ավելին ուներ: Սակայն վերջին տուրում արտագնա խաղում մրցում էր հանդիպակաց «Լիվերպուլի» հետ: Իսկ «Մանչեսթրը» ուժեղ չափում էր «Վեսթհեմի» հետ: Հաղթանակի դեպքում «Մանչեսթր Յունայթեդը» 3-րդ անգամ անընդմեջ կարող էր նվաճել Անգլիայի չեմպիոնի կոչումը, քանի որ Բլեկբուրնի թիմի հնարավորություններ Լիվերպուլի հետ խաղում բարձր չէին գնահատվում: «Մանչեսթր Յունայթեդը» «Վեսթհեմի» մարզադաշտում ամեն ինչ արեց հաղթանակի հասնելու համար:

Առաջին կեսից հետո «Վեսթհեմը» առաջնում էր 1-0 հաշվով: «Մանչեսթրի» ֆուտբոլիստները լավ գիտեին, որ իրենց բախտը իրենցից է կախված և երկրորդ կեսը սկսեցին բուռն գրոհներով: 53-րդ րոպեին, երբ Մակ Կլեյրը հաշիվը հավասարեցրեց, շատերը մտածում էին, որ «Յունայթեդը» կհասնի իր նպատակին: Բայց իզուր: «Մանչեսթր Յունայթեդը» 5-6 անգամ ոչով գոլային դահիճ է ստեղծում: Բոլոր գրոհները մնում են արդյունք: «Վեսթհեմի» դարպասներ անթերի են խաղում: Վերջին րոպեին «Մանչեսթրի» ռմբարկու Էնդի Քոլը մենամենակ է դուրս գալիս «Վեսթհեմի» դարպասապահ Միկլոսկոյի դեմ: Վերջինս անձնուրաց ցատկով հարձակվողի ոտքերից փախցնում է գնդակը և փրկում իր թիմին վերահաս վտանգից: «Մանչեսթր Յունայթեդը» անհաջողության է մատնվում նույն «անիծյալ թիմի» «Վեսթհեմի» դասճառով, որը 1992-ին էլ «Մանչեսթրին» զրկեց չեմպիոնի տիտղոսից: Բլեկբուրնի «Ռովերս» թիմը, չնայած 1-2 հաշվով դարձվեց «Լիվերպուլին», սակայն «Վեսթհեմի» շնորհիվ առաջին անգամ նվաճում է Անգլիայի չեմպիոնի տիտղոսը:

Անգլիայի առաջնության ամփոփիչ աղյուսակը

1. «Բլեկբուրն Ռովերս»	89
2. «Մանչեսթր Յունայթեդ»	88
3. «Նորինգհեմ Ֆորեսթ»	77
4. «Լիվերպուլ»	74
5. «Լիդս Յունայթեդ»	73
6. «Նյուկասլ Յունայթեդ»	72
7. «Տոտենհեմ»	62
8. «Քուինզ Պարկ Ռեյնջերս»	60
9. «Ուիմբլդոն»	56
10. «Սաութհեմփթոն»	54
11. «Չելսի»	54
12. «Արսենալ»	52
13. «Շեֆիլդ»	51
14. «Էվերտոն»	50
15. «Քովենթրի»	50
16. «Մանչեսթր Սիթի»	49
17. «Աստոն Վիլլա»	48
18. «Վեսթհեմ»	47
19. «Քրիսալ Պալաս»	45
20. «Նորվիչ»	43
21. «Լիսեստեր»	29
22. «Իպսվիչ»	27

ԽԾԱՆԿԱՐ

ԱՄՆ-ի ամենասիրված մարզիկները

Վերջերս կատարված հարցման արդյունքներով Ամերիկայի Միացյալ Նահանգների ամենասիրված 20 մարզիկների թվում են նաեւ Սիմոն Սոնը, Մայք Թայսոնը եւ Տոնյա Հարդինգը, որոնք խնդիրներ ունեն կամ ունեցել են երկրի օրենսդրական մարմինների հետ:

Մանեկենուհիները գոլֆի դասերում

Գոլֆի մրցումներին ոչ միայն են մասնակցում լավ հագնված եւ մարզական կեցվածք ունեցող մարդիկ: Դա այս նկարում փաստում է Ֆլորիդա

նահանգի գոլֆի սիրահարներից մեկը: Բայց մրցումների կազմակերպիչները խաղի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու եւ մասնակիցներին զվարճացնելու համար գոլֆի դասեր հրավիրեցին մի քանի մանեկենուհիների, որի հետեւանքով շուտով տարօրինակ զույգեր կազմվեցին:

ՇԱԽՄԱՏ

Կանայք ու տղամարդիկ իրար դեմ

Շախմատի ուշագրավ մրցավեճ է տեղի ունենում կանանց աշխարհի հավակնորդի եւ տղամարդկանց վեսերան շախմատիստների միջեւ: Արդեն կայացել է թիմային 5 հանդիպում: Շատերի համար որքան էլ տարօրինակ թվա, առայժմ մեկ միավորի առավելությամբ առջեւում են գեղեցիկ սեռի ներկայացուցիչները: Անհատական հաշվարկով լավագույն արդյունքներն ունեն աշխարհի չեմպիոնուհի Սե Չժունը (Չինաստան), աշխարհի նախկին չեմպիոն Բորիս Սպասկին (Ֆրանսիա), ինչպես նաեւ Պիա Կրամլինգը (Շվեդիա) եւ Վլատիմիր Հորսը (Գերմանիա): Նրանք 5 հնարավորից վաստակել են 3-ական միավոր:

5-րդ տուրում Հորսը հաղթեց Կրամլինգին, Սե Չժունը սեւերով առավելության հասավ աշխարհի նախկին չեմպիոն Վասիլի Սմիսլովի նկատմամբ: Ոչ ոքի ավարտվեցին Վիկտոր Կորչնոյ-Հուդիթ Պոլգար, Նանա Իոսելիանի-Լայոս Պորշիս, Ժուժա Պոլգար-Բորիս Սպասկի հանդիպումները:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԱՎԱԹ

Բրազիլացիների համեստ հաղթանակը

Ուրուգվայում հուլիսի 5-ից մեկնարկել է տարվա ֆուտբոլի խոշորագույն մրցաշարերից մեկը՝ Ամերիկայի գավաթի խաղարկությունը, որին մասնակցում են 12 երկրների հավաքականներ: Թիմերը նախնական փուլում բաժանվել են 3 խմբի: Ահա այդ խմբերի կազմերը.

A խումբ
Ուրուգվայ, Վենեսուելա, Մեքսիկա, Պարագվայ

B խումբ
Կոլումբիա, Պերու, Բրազիլիա, Էկվադոր

C խումբ
ԱՄՆ, Չիլի, Արգենտինա, Բոլիվիա

Խմբերում առաջին երկու տեղ գրաված երկրներ եւ լավագույն ցուցանիշներ ունեցող երրորդ տեղ գրաված երկու թիմերը հառնող եզրափակիչի ուղեգիր ձեռք կբերեն:

Առաջին տուրում Մեքսիկայի հավաքականը 1-2 հաշվով անակնկալ պարտություն կրեց Պարագվայի հավաքականից:

Աշխարհի չեմպիոն Բրազիլիայի հավաքականը 1-0 հաշվով դժվարին հաղթանակ տարավ Էկվադորի հավաքականի նկատմամբ: Կոլումբիայի եւ Պերուի հավաքականների մրցավեճում արձանագրվեց ոչ-ոքի 1-1: Կոլումբիայի հավաքականից աչքի ընկավ աշխարհի ամերիկյան առաջնությունից ֆուտբոլասերներին քաջ հայտնի Ադրիանա, որը մեծ հաջողությամբ հանդես է գալիս իտալական առաջնությունում: ԱՄՆ-ի հավաքականը 2-1 հաշվով առավելության հասավ Չիլիի հավաքականի նկատմամբ: Նույն արդյունքը գրանցվեց նաեւ Արգենտինա-Բոլիվիա մրցավեճում: Հաջողությունն ուղեկցեց աշխարհի կրկնակի չեմպիոնին Արգենտինայի հավաքականին, որի կազմում աչքի ընկան Բաշտատան ու Բայրոն:

Այսօր կմրցեն ԱՄՆ-ի եւ Բոլիվիայի, Արգենտինայի եւ Չիլիի հավաքականները:

Խմբային մրցաշարերը կավարտվեն հուլիսի 14-ին:

Քառորդ եզրափակիչ հանդիպումները կկայանան հուլիսի 16-ին եւ 17-ին:

Կիսաեզրափակիչ հանդիպումները՝ հուլիսի 19-ին ու 20-ին:

Երրորդ տեղի համար հանդիպումը հուլիսի 22-ին կկայանա Մոնտեվիդեոյում, իսկ վճռական խաղը հուլիսի 23-ին նույնպես կանցկացվի Մոնտեվիդեոյում:

Բոլոր վարկերը է
ՍՈՐԵՆ ԲԱՂՈՅԱՆՆԵՐԸ

digitised by A.R.A.R.@

ՕՐՎԱ ԽԵՏՔԵՐՈՎ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Գրոզնիի բանակցություններում դարձյալ անորոշություն

Անընդմեջ հանդիպումներ Խողոմում

Գրոզնիում Չեչնիայի խաղաղ կարգավորման բանակցություններին մասնակցող կողմերը երեկ չընդունեցին կոմյունիկե, այսինքն՝ այն որևէ էական արդյունք չտվեց: Պատվիրակությունների դիրքորոշումները Չեչնիայի կարգավիճակի հարցում առաջվա պես բաժանվում են, ասաց լրագրողներին Ռուսաստանի նախագահի բանակցություններին մասնակցող իրավական հարցերի օգնական Միխայիլ Կրասնովը: Ռուսաստանյան պատվիրակությունը, նրա ասելով, առաջարկել է դուդաևական կողմին համընդհանուր ժողովրդավարական ընտրություններն անցկացնելուց հետո Չեչնիայի կարգավիճակի մասին հարցի քննարկումը նախատեսող տարբերակ: Չեչենական կողմը առաջվա պես դնդում է հանրապետության լիակատար իսկնիշխանությունը, սակայն միաժամանակ նրա դիրքերում արդեն նշմարվում են «անշան մեղմացման» նշաններ, ասաց Կրասնովը:

Ինչպես հայտնեց ՌԻԱ-Նովոստի թղթակցին ազգային վերածննդի կառավարության ղեկավար Ասլամբեկ Հաֆիզը, մինչ այդ քննության առնված զրույցական տարբերակը, հավանաբար, այլևս չի քննարկվի, քանի որ դուդաևական կողմն անգիջողական դիրք է բռնել այս հարցում:

Ջոհար Դուդաևի կողմնակիցների հանդիպումները Գրոզնիում ԵԱՀԿ-ի առաքելության շենքի մատույցներում, որտեղ անցկացվում են Չեչնիայի հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունները, մշտական բնույթ են կրում: Ինչպես հուլիսի 10-ին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, ամբոխը վեր է դարձել հետեւյալ կարգախոսները. «Ո՛չ հաշտության բանակցությունների ձախողմանը» եւ «Կեցցե Ջոհար Դուդաևը Չեչնիայի Հանրապետության միակ նախագահը»:

Ընդհանուր առմամբ Չեչնիայի մայրաքաղաքում կյանքը շարունակվում է ընթանալ նորմալ հունով, հուլիսի 10-ին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է Չեչնիայի Հանրապետության գործադիր իշխանության համալեռնական մարմինների տարածաշրջանային վարչության ղեկավարի առաջին տեղակալ Վլադիմիր Զորինը: Քաղաքում, բոլոր պաշտոնական տվյալների, այսօրվա դրությամբ առկա է 275 հազար մարդ, պաշտոնապես գործում են 12 քաղաքական կուսակցություններ եւ շարժումներ:

ՈՒՍ-ՍԵՍՐՔ, ԱՐՍԵՆՊՐԵՍ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական բաց համալսարանը հայտարարում է ընդունելություն 1995-1996 ուսումնական տարվա համար հետեւյալ մասնագիտությունների գծով.

- միջազգային իրավագիտություն
- միջազգային ժուռնալիստիկա
- մենեջմենթ եւ ֆինանսա բանկային գործ
- հաղորդագիտություն-օտար լեզուներ
- գեղարվեստական մոդելավորում եւ միջազգային նորաձեւություն:

ՀԲՀ-ն արտոնագրված է ՀՀ կառավարության կողմից:
ՀԲՀ-ում ուսման տեւողությունը 4,5 տարի է:
ՀԲՀ-ում ուսուցումը վճարովի է:
Փաստաթղթերի ընդունման եւ ընդունելության քննություններին մասնակցելու համար մուծվում է որոշակի գումար:
Դիմորդները ներկայացնում են հետեւյալ փաստաթղթերը. դիմում՝ ՀԲՀ-ի ռեկտորի անունով, միջնակարգ, միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթության փաստաթուղթ (իսկականը կամ պատճենը), տեղեկանք առողջության մասին (086 ձեւ), 6 լուսանկար (3x4 սմ չափի):
Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 20-ից մինչեւ օգոստոսի 12-ը, ամեն օր, ժամը 11:00-16:00, շաբաթ եւ կիրակի օրերին՝ ժամը 11:00-14:00:
Ընդունելության քննություններն անցկացվում են օգոստոսի 14-ից հետեւյալ առարկաներից.

- միջազգային իրավագիտություն՝ հայ ժողովրդի պատմություն (բանավոր), հայոց լեզու եւ գրականություն (բանավոր), օտար լեզու (բանավոր)
- միջազգային ժուռնալիստիկա՝ հայ ժողովրդի պատմություն (բանավոր), հայոց լեզու եւ գրականություն (բանավոր), օտար լեզու (բանավոր)
- մենեջմենթ եւ ֆինանսա բանկային գործ՝ մաթեմատիկա (բանավոր), հայ ժողովրդի պատմություն (բանավոր), հայոց լեզու եւ գրականություն (բանավոր)
- հաղորդագիտություն-օտար լեզուներ՝ հայ ժողովրդի պատմություն (բանավոր), հայոց լեզու եւ գրականություն (բանավոր), օտար լեզու (բանավոր)
- գեղարվեստական մոդելավորում եւ միջազգային նորաձեւություն՝ մասնագիտական առարկաներ (գծանկար, գունանկար, հատուկ կոմպոզիցիա, կոմպոզիցիայի հիմունքներ), հայոց լեզու եւ գրականություն (բանավոր):

ՀԲՀ-ի հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 8, 2-րդ հարկ, 24 սենյակ:
Հեռ. 52-39-71, 58-51-05:

ՏՈՒՐՔԱԿԱՆ

Թուրքական օգնություն Ադրբեջանին

ՈԴ զանգվածային լրատվական միջոցները՝ վկայակոչելով իրազեկ աղբյուրներ հաղորդել են, որ Բաքվում ընթացող թուրք-ադրբեջանական բանակցությունների ժամանակ թուրքական կողմը պատրաստակամություն է հայտնել Ադրբեջանին հատկացնելու 250-350 միլիոն ամերիկյան դոլար՝ բնակչության համար թուրքիայից սննդամթերք ձեռք բերելու համար:

Ճապոնիայից արտաքսվել է 3662 արտասահմանցի

Ճապոնիայի տարածքում ապօրինաբար գտնվող ընդհանուր հաշվով 3662 արտասահմանցիներ արտաքսվել են երկրից մայիս-հունիս ամիսներին անցկացված համազգային արշավի հետեւանքով: Ինչպես հուլիսի 10-ին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, Տոկիո, Օսակա, Նագոյա քաղաքներում եւ մյուս խոշոր արդյունաբերական կենտրոններում ոստիկանության ուշադրության հիմնական օբյեկտ են դարձել այն օտարերկրացիները, որոնք աշխատել են ի խախտումն իրենց այցագրային կարգավիճակի: Արտաքսվածների մեծ մասը եղել են Հարավային Կորեայի, Չինաստանի եւ Ֆիլիպինների քաղաքացիներ:

ԱՐՍԵՆՊՐԵՍ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Ադրբեջանի փոխարտգործնախարարը ցանկալին ներկայացնում է որպես իրական

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 10 ՀՈՒԼԻՍ, ՌՆԱ-ԲԸ: ԼՂՀ արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավար Արկադի Ղուկասյանը Սնարին տված հարցազրույցում «ցանկալին որպես իրական ներկայացնելու ձգտում» անվանեց Ադրբեջանի փոխարտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովի վերջերս Հելսինկիում ավարտված բանակցություններին տված գնահատականները:

Այսպես, Զուլֆուգարովի պնդմամբ, իբր ենթադրվում է անցման ժամանակաշրջանում, այսինքն՝ ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի աշխատանքի ընթացքում Լեռնային Ղարաբաղում ստեղծել էթնիկական երկու կենտրոն. Շուշիում ադրբեջանական եւ Ստեփանակերտում հայկական, իրենց վարչակազմերով հանդերձ:

Մինչդեռ, նշեց Ղուկասյանը, Ադրբեջանի պատվիրակության այդ անհեթեթ առաջարկությունը, բնականաբար, մերժվեց բանակցությունների մյուս մասնակիցների, այդ թվում՝ Մինսկի խորհրդաժողովի համանախագահների կողմից: «Հարց է ծագում, ի՞նչ կարիք կա ստեղծել այդ կենտրոնները, եթե դրանք արդեն կան. ադրբեջանականը՝ Բաքվում, իսկ հայկականը՝ Ստեփանակերտում», շարունակեց նախարարը:

Ղուկասյանը «հիվանդ երեւակայության արգասիք»-համարեց նաեւ Զուլֆուգարովի հաղորդումները բանակցություններում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, Լաչինի եւ Շուշիի, շրջանի անվտանգության ապահովման հարցերում ադրբեջանական դիվանագիտության ձեռք բերած հաղթանակների վերաբերյալ:

Վրաստան առաքված այլուրն ու շաքարը վերավաճառվել է Ադրբեջանին

ԹԲԻԼԻՍԻ, 10 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐԲ: Վրաստանի համար նախատեսված 40 հազար տոննա հումանիտար այլուրն ու շաքարը վերավաճառվել է Ադրբեջանին, ինչում է վրացական BGI գործակալությունը, վկայակոչելով լավատեղյակ աղբյուրներ: Հաղորդվում է, որ հումանիտար բեռով լի նավը Փոթի նավահանգիստ է մտել հուլիսի 1-ին: Հաջորդ օրն ամբողջ բեռն առաքվել է Ադրբեջան: Եթե նկատի ունենանք, որ բեռնանավերը նավահանգստում մնում են շաբաթներով, դարձյալ կդառնա, որ Ադրբեջանի ներկայացուցիչները նավահանգստի ղեկավարության հետ պայմանավորվածություն են ունեցել այդ ձեռնարկման շուրջը, եզրակացնում է գործակալությունը:

«ԱՐԱՅ» ֆիրման

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

"Panasonic" ֆիրմայի հեռախոսային կապի գերժամանակակից էլեկտրոնային համակարգեր

1. KX – T 30810B *մինչեւ 3 քաղաքային հեռախոսային գիծ եւ մինչեւ 8 ներքին աբոնենտ*
2. KX – T 6160B *մինչեւ 6 քաղաքային հեռախոսային գիծ, եւ մինչեւ 16 ներքին աբոնենտ*
3. KX – T 12321D *մինչեւ 12 քաղաքային հեռախոսային գիծ եւ մինչեւ 32 ներքին աբոնենտ*

ՄԵՐ ԲԱՐՁՐՈՐԱԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԿՕԳՆԵՆ ՁԵՋ ՍԵՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՎԵՐԱՄԲԱԳԱՎՈՐԵԼ ԱՅՆ ԸՍՏ ՁԵՐ ՊԱՀԱՆՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՏԱՆ 1 ՏԱՐՎԱ ԵՐԱՇԽԻՔ

Մեր հասցեն՝ Հեռախոսները՝ Ազատության պողոտա 9 25-37-50, 25-10-87, 25-43-87

Դրամներ, կրծքանշաններ, թղթադրամներ

ԿՕԳՆԵՆՔ ԳՆԵԼ ԵՎ ՎԱՃԱՌԵԼ

- Հայկական եւ խորհրդային կրծքանշաններ, շքանշաններ եւ մեդալներ՝ 1920-30 թթ. եւ ավելի ուշ շրջանի
- Արտասահմանյան օլիմպիական եւ այլ կրծքանշաններ
- Հնամյա մետաղադրամներ
- Հնամյա թղթադրամներ, նաեւ նախկին ԽՍՀՄ 50-ից մինչեւ 10000 ռուբլի
- Հնամյա բացիկներ եւ փաստաթղթեր

Մեր հասցեն՝ Երեւան, Աբովյան փ. 26, «Սինթետիկա» (355) խանութ, ամեն օր, ժ. 11.00-17.00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

ВНУКОВСКИЕ АВИАЛИНИИ

«ՎՆՈՒԿՈՎՅԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ»

ԲԱՑ ՏԻՊԻ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

հրավիրում է

անվայրէջք ուղիղ չվերթի

ՄՈՍԿՎԱ - ԵՐԵՎԱՆ - ՄՈՍԿՎԱ

(Վնուկովո) (Վնուկովո)

ԻԼ-86 օդանավով

Թռիչքի օրերը՝

չորեքշաբթի, հինգշաբթի, կիրակի

Տոմսերը վաճառվում են «ԱՎԻԱՏԲԱՆՍ»-ի տոմսարկղերում

Հասցե՝ Մաշտոցի պող. 15 Հեռախոս՝ 56-81-30

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արաքսյան 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 1897 Տարածաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 10. 07. 1995 Գինը՝ 40 դրամ

digitised by A.R.A.R.@